Զ. ՏԱՐԻ 1644 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 30 ՄԱՐԳԱՑ 4381 — Հ. Տ. 6 ՅՈՒԼԻՍ 1889 — Ն. Տ. 18 ՅՈՒԼԻՍ 1889 — ՀԻՃՐ. 20 ԶԻԼԳԱՏԷ 1306 ՀԻՆԳՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك

غزته‌سی اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata]
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան գանձանակ	արծաթ	160
» »	Վեցամսեայ »	»	80
» »	Եռամսեայ »	»	40
Գաւառաց »	Տարեկան »	»	200
» »	Վեցամսեայ »	»	100
Օտար երկիրներէ տարեկան	Ֆրանք		56
» »	վեցամսեայ »		28

Դուրս զրկուած լրագրոյ համար ծախքը Տիրութիւնն վրայ է
խմբագրութենան զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 6 ՅՈՒԼԻՍ, 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ֆրանսական արդի Խորհրդարանը փակեց իւր վերջին նստաշրջան. բայց ի՞նչ նստաշրջան, և մանաւանդ ի՞նչ փակում։ Վերջին չաթեներուն մէջ հակահանրապետական կիրքերը ծայրագոյն աստիճանին հասած էին։ Անձնականութիւնք, նախատալից բանակռիւք, գայթակղական տեսարանք իրարու կը յաջորդէին, թելադրուելով Պուլանժէականաց և Միապետականաց կողմէ, որք այս հակիրճ միջոցը գտած էին ծաղրելի և ատելի դարձնելու համար խորհրդարանական դրութիւնն, որուն տեղ կ'ուզեն հաստատել պուլանժէական անորոշ դրութիւն մը։

Բայց բոլոր այս աղմուկներու և գոռումգոչումներու միջոցին, չնորհիւ հանրապետական կուսակցութեան յարատև ջանադրութեան, Խորհրդարանը բաւական գործ ալ տեսաւ։ Զինուորական Օրէնքն, ստուար և մանրակրկիտ աշխատութիւն, վերջապէս քուէարկուեցաւ, հանրավարական և մանաւանդ արմատական դաղափարաց համեմատ վերակազմելով և ժողովրդականացնելով բանակն։ Այս օրէնքին կարդ մը տրամադրութիւնք սահմանեալ են սակայն ժողովրդական դրժգոհութիւն պատճառելու, մանաւանդ Ղերմեռանդ կաթոլիկ հասարակութեան մէջ, և Պուլանժէականք ասոր համար շատ ուրախ են, թէեւ Պուլանժէ զօրավարն ինք զանաչին մատոյց այս օրէնքը Խորհրդարանին վաւերացնելու համար արմատական կուսակցութեան։

Իւր նստաշրջանը փակելուն առթիւ, Խորհրդարանը քաղաքական յանցանօք բանտարկելոց համար ընդհանուր ներողութիւն հռչակեց։ Հեռաձայն գործիքի (Թէլէֆոն) հաստատումն և կիրառութիւնը կանոնաւորող օրէնք մը քուէարկեց։ Երեսփ. Ժողովը կանայց քաղաքային կամ թաղապետական ընտրողութեան իրաւունք առաւ ծրագիր մը քուէարկեց, զոր սակայն Մերակոյտը մերժեց։ Յատկապէս Պուլանժէ զօրավարին դէմ ուղղեալ օրէնք մը քուէարկեցաւ, արգիլելով ո՛և է ընտրելուց քանի մը գաւառակներէ միանգամայն ընտրելի առաջարկելով, Պուլանժէականաց նպատակն է ցոյց տալ թէ երկրին մեծամասնութիւնը պուլանժէական է։ և հակապուլանժէական օրէնքին քուէարկումէն ետքն ալ իրենք կ'ըսեն թէ շատ մը գաւառներու մէջ և մանաւանդ Փարիզի ամեն շրջանակաց մէջ ընտրելի պիտի ներկայացնեն և ընտրել տան զՊուլանժէ, այսու բարոյական ցոյց մ'ընելու համար, և այս ընտրութիւնք իբրեւ անվաւեր ընդունելէ ետքը, Զօր. Պուլանժէի տեղ իւր կուսակիցները պիտի ընտրեն մէկ մի՞ շրջանակի մէջ։

Մինչ Խորհրդարանն այս օրէնքը կ'ընդունէր, անդին Գերագոյն Ատեանն եւս կենդանութեան նշան կուտար. զի իւր Ամբաստանիչ Ատեան Պուլանժէ զօրավարին և համախոհից ոմանց դէմ ընդհանուր դատախազին ամբաստանութիւնները բաւական ծանր գտնելով, Գերագոյն Ատենին առջեւ ի դատ կը կոչէր զանոնք։

Պ. Թիւառի վարչութիւնն ամենայն հաստատամտութեամբ կը մերժուի Պուլանժէականաց դէմ, զոր Գերագոյն Ատենին առջեւ, հասարակութեան առջեւ, ինչպէս և ընդհանուր ընտրութեանց մէջ չախչախելու համար բան մը պակաս չի թողուր։ Պուլանժէական դատին վերաբերեալ բոլոր թուղթերն ի հրատարակութիւն տալ որոշելով, Գերագոյն Ատեանը կը պատասխանէ զինք ամեն օր նախատող Պուլանժէականներուն, և հանրային կարծեաց կոչում մը կ'ընէ։

Բայց պուլանժէական թերթերն ու գործիչներն ալ պարապ չեն կենար։ Պ. Ռոշֆոռ, որ Լոնտոն կը դտնուի զօրավարին հետ, անկէ ներշնչուած մէկ մէկ «յայտնութեամբ» կը փորձէ անպատուել և չախչախել Պուլանժէ զօրավարին նախորդ պաշտօնակիցները։ Դատական նախարար Պ. Թէվընէէ, ներքին գործոց նախարար Պ. Գոնսթանէ և ելմտական նախարար Պ. Ռուվիէէ եռքը կարգը կուգայ պատերազմական նախարար Պ. տը Ֆրէսինէի, եւ Պ. Ռոշֆոռ կը գրէ իւր Ինթրանսիժան լրագրին թէ Պ. տը Ֆրէսինէ գործը զոյդ բռնելու վրայ է։ Այս անցաւոր աշխարհիս մէջ եւ մանաւանդ այս փոխոխամիտ Ֆրանսացւոց մէջ, խորամանկ Պ. տը Ֆրէսինէ իւր ապագայն ապահովել կ'աշխատի եղեր, և ասոր համար, մի կողմէ Վէնսան գնդապետն ի պատերազմական պաշտօնարան հրաւիրելով և գրգռելով որ Պուլանժէ զօրավարին դէմ սուտ վկայութիւն տայ, միւս կողմէ ձեռքի տակէ մարդ կը ղրկէ եղեր Պուլանժէ զօրավարին քով, ծանուցանելով իւր պուլանժէական համակրանքն, և յայտարարելով թէ պատրաստ է համաձայնութեան մը գալ Ազգային կուսակցութեան հետ, որոյ պետը (Պուլանժէ) իւր (Պ. տը Ֆրէսինէի) պաշտօնակիցն էր Պ. Կոպլէի նախարարութեան մէջ։

Եթէ ստոյգ է Պ. Հանրի Ռոշֆոռի այս պատմութիւն, Պ. տը Ֆրէսինէ մերմնով հանրապետական և կառավարական, իսկ հոգւով պուլանժէական և ընդդիմադիր մ'է, և առաջին անգամը չէ որ Պ. տը Ֆրէսինէ կ'ամբաստանուի այսպիսի երդիմի քաղաքականութեամբ մը։ Որչափ ալ անհաւանական, յուսեր պիտի հաւատան Լէնրանէէսի կրակոտ անօրէնին հրատարակած զրոյցին։ Եթէ Պ. Թիւառի վարչութեան դէմ իւր հակառակորդաց ամենօրեայ չարախօսութիւններուն հարիւրէն տասն ալ հաւատող գտնէ, դարձեալ մեծ բան է։

Խորհրդարանին փակման առթիւ անակնկալ միջադէպ մը տեղի ունեցաւ։ Երեմոցոյցը թէ՛ Երեսփ. Ժողովոյ և թէ Մերակոյտի կողմէ քուէարկուելէ յետոյ, որ ո՛չ նուազ պատուաբեր է արդի նախարարութեան համար, Երեսփ. Ժողովը նմանապէս ընդունելոց Ժողովային նախարար Պ. Քրանէի ծրագիրը նոր մարտանաւուց շինութեան համար 58 միլիոն ֆր. ի վարկ խնդրող և ուրիշ վարկ մը երեք միլիոն ֆր. ի Ծովային նաւահանգստաց համար։ Երեսփ. Ժողովն այս վարկերը քուէարկելէ յետոյ, իւր նստաշրջան փակեալ յայտարարեցաւ։ Մերակոյտն ևս, զանազան օրինագծեր քուէարկելէ ետքը, երբ կարգն եկաւ Ծովային նախարարին կարեւոր ծրագրաց քուէարկութեան, Մերակոյտի դեր-նախագահ Պ. Հիւնպէռ Թոյլ չտուաւ որ Մերակոյտը վիճաբանի առնոց վրայ, առարկելով թէ նստաշրջանը փակող հրամանագիրն արդէն կարդացուած է Երեսփ. Ժողովոյ մէջ, և թէ Սահմանադրութիւնը Մերակոյտին կ'արգիլէ նստաշրջանն երկարաձգել։

Ուրեմն, կանոնական պարզ դիտողութեամբ մը, Ֆրանսայի նաւատորմին համար յոյժ կարեւոր որոշում մը անսահման կերպիւ կը յետաձգուի։ Բնական է որ Մերակոյտի սովորաբար խաղաղասէր անդամք սաստիկ յուզման մը մէջ ցրուած լինին։ Արդեօք Պ. Հիւնպէռ կառավարութեան դէմ ցոյց մ'ըրաւ՝ նստաշրջանին փակման հրամանագիրն Երեսփ. Ժողովոյ մէջ կարդալ աճապարելուն համար, կամ աւելի թաքուն նպատակ՞ մը ծառայեց, խնդիրներ են որք օրերով պիտի զբաղեցնեն Ֆրանսական հանրային միտքը, քանի որ Պ. Հիւնպէռի մէկ դիտողութեամբ Ֆրանսական նաւատորմը բաւական ժամանակի մը համար կը զրկուի իւր վերակազմութեան ու զօրացման անհրաժեշտ դատուած այն մեծաքանակ վարկերէն։

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պ. Քրիսպիի լրագիրը, Ռէֆորմա, կը յանդիմանէ Արմատականներն, ըսելով թէ ժամանակն յարմար չէ միտքերը բաժնելու Իտալիոյ նիղակացութեանց նկատմամբ։ Արտաքուստ կացութիւնը բնաւ ապահովիչ չէ, և մէկ օրէն միւսը կրնայ պատերազմ ծագիլ. ուրեմն անդէպ է նիղակացութիւնները քննադատել։ Բայց ասոնք, կ'ըսէ Ռէֆորմա, կղերական կուսակցութիւնը կը պատրաստուի յօգուտ իրեն կը գործածել քաղաքային կամ թաղապետական նոր օրէնքն, յուսալով իւր ընտրելիներն յաջողցնել շատ մը շրջանակներու մէջ։ Ուրեմն, Ազատականք (Պ. Քրիսպիի կուսակիցք) պէտք է համախմբին՝ այս յարձակման դէմ դնելու համար։

—Ծանուցուած էր թէ Ումբերթոս թագաւոր հարաւային Փոլէի գաւառը պիտի երթար՝ երկրին վիճակն աչքէ անցուցնելու, և այս ուղեւորութեան յետաձգման առթիւ, կ'ըսուի թէ Ն. Վեհափառութիւն անհանգիստ է։ ըստ այլոց, յիշեալ գաւառին երկրագործաց և այլ գասուց մէջ թշուառութիւնն այնչափ մեծ է այս միջոցիս որ այնպիսի ուղեւորութիւն մը բարեպատեհ չի համարուիր։

ԱՅՍ ՏԱՐԻՈՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԵՒ ԱՆՈՆՑ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆ

Այս միջոցիս յեւրոպա և ի Միաց. Նահանգս ամենէն աւելի ուշադրութիւն դրաւողն է տարւոյս միջազգային հնձոց քանակութիւնն։ Եւ այս ալ առանց պատճառի չէ, քանի որ առաջիկայ երկուասան ամսոց մէջ Ռուսիոյ երմտային կացութիւնն, Աւստրիոյ-Հունգարիոյ ներքին քաղաքականութիւնն եւ Ամերիկայի արմատաշատ նահանգաց տնտեսական վիճակը կախում ունին 1889ի հնձոց քանակութենէն։ Ամենէն վաւերական հեղինակութիւնք կը յայտարարեն թէ այս տարւոյ հունձքն ի դերեւ պիտի հանէ ամեն նախընթաց ենթադրութիւններ և հաշիւներ։ Անցեալ տարի Անգլիա, Ֆրանսա և Գերմանիա, Եւրոպիոյ երեք մեծ երկիրներն որք դուրսէն կ'առնուն իրենց արմտեաց մէկ մեծ մասը, շատ անբաւական հունձքեր ունեցան։ Ամերիկայի մէջ եւս հունձքն անբաւական եղաւ, մինչ ի Ռուսիա անօրինակ կերպիւ առատ էր, և Աւստրիոյ-Հունգարիոյ հունձքն եւս այնչափ լաւ էր որ կ'ըսուէր թէ քսան տարիէ հետէ նմանը չէր տեսնուած։ Ռուսիոյ և Աւստրիոյ բաժնին ինկաւ ուրեմն Եւրոպիոյ միւս երկրաց հնձոց պակասը ընել։ Ռուսիա արտասովոր համեմատութեամբ արմտիք զրկեց Յունգլիա 1888ին, և Աւստրիա եւս շատ ցորեն և լաւ դարի արտադեց։

Իսկ այս տարի իրաց վիճակը բոլորովին հակառակ թուի լինել։ Անգլիոյ, Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ հունձքերը շատ լաւ կ'երեւին։ Ուրեմն, այս երեք երկիրք առջի տարուան չափ բան չպիտի գնեն դուրսէն։ Ամերիկայի մէջ եւս հունձքեր յաջող կ'երեւին։ Իսկ Ռուսիոյ և Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ այս տարի միջնէն շատ պակաս պիտի լինին։ Վերջին չաթեներու անձրեւք նախախնամական բարիք մ'եղան Ռուսիոյ համար, հնձոց կատարեալ փճացման առաջքն առնելով, որ երկարատեւ երաշտութեան անխուսափելի հետեւանքը պիտի լիներ։ Բայց Ռուսիոյ և Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ ո՛չ միայն առատութիւն չկայ այս տարի, այլ և սովորական տարւոց միջին ալ չերեւիր, և արմտեաց տեսակն ևս սուղ կը համարուի։ Ուրեմն, Ռուսիա և Աւստրիա-Հունգարիա մեծաքանակ արմտիք արտածելու կարողութիւն չպիտի ունենան, որով իրենց հասոյթին մէկ գլխաւոր միջոցէն պիտի զրկուին, բան մը որ ի հարկէ աննպաստ ազդեցութիւն կ'ընէ այս երկուց Տէրութեանց գանձային և տնտեսական պայմանաց վրայ։ Թէ՛ Ռուսիա և թէ Աւստրիա-Հունգարիա անցեալ տարիէն ի վեր կարեւոր գումարներ յատկացուցին զինուորական պիտոյից, և նոր տուրքեր դրին, որոց գիմադրաբերելու համար տնտեսական յաջող կացութեան մը վրայ յոյսեր կը դնէին, զորս հնձոց ազբատութիւնն ի դերև կը հանէ չարաչար։

ԼԵՀԱՑԻՔ Ի ՌՈՒՍԻԱ ԵՒ Ց'ԱՒՍՏՐԻԱ

Սանդ-Պիթերսբուրգ նախընթաց աւուր թերթով կը կարդանք թէ ի Գերմանիա և յԱւստրիա շատ աղմուկ կը հանէ ի Վարշաւիա հրատարակեալ և յատկապէս առ Լեհս ուղղեալ տետրակ մը։ Հեղինակն է եղեր Վիէլոփոլսքի մարքիզն, երբեմն կուսակալ ռուսական Լեհաստանի, որ միշտ կուսակից եղած է լեհ և ռուս ազգաց միջեւ իրաւախոհութեան եւ համաձայնութեան։ Մարքիզը կը թախանձէ իւր հայրենակցաց որ պատերազմի ժամանակ իրենց յոյսն օտար տէրութեանց վրայ չդնեն։ Կ'ըսէ թէ ռուսական Լեհաստանի և Կալիշիոյ տնտեսական պայմանաց բարդատութիւն մը ցոյց կուտայ թէ Լեհք ո՛ր աւելի հանգիստ են, և հետեւապէս ո՛ր կողմն է իրենց շահն։ Այս յորդոր իւր նշանակութիւնն ունի, որովհետեւ երբ Ռուսիա Գերմանիոյ կամ Աւստրիոյ հետ պատերազմի բռնուի, իւր լեհ հպատակաց ընթացքը ծանրակշիռ կարեւորութիւն մը պիտի ունենայ։

«ՓՐՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՆ» Ց'ԱՆԳԼԻԱ ԵՒ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԸՆ

«Փրութեան բանակը», Բողոքականութեան այս նորագոյն և ամենէն տարօրինակ ձեւը, դեռ կը գործէ, և մերթ ընդ մերթ հետաքրքրաշարժ երեւոյթներ յառաջ կը բերէ։

Այս կրօնական մարմնոյ նախաձեռնութեամբ, Երեսփ. Ժողովոյ վերջին նիստերէն մէկն մատուցուեցաւ հանրագրութիւն մը, պահանջող որ կիրակի օրն աւելի ևս խնամով սուրբ պահուի։

Հանրագիրը 456,500 ստորագրութիւն կը կրէր, և հետեւապէս ահագին ծաւալ մ'ունէր։ Գլանաձեւ ծրարուած, քառաձի սայլի մը վրայ դրուած էր։ Սայլին առջեւէն կ'երթային երկու կառքեր յորս երաժիշտներ նստած կը նուագէին։ Սայլին առջեւէն և ետեւէն կ'ընթանային «Փրութեան բանակին» պատուիրակութիւնք։

Երբ այս թափոր հասաւ Խորհրդարանի պալատը, տեղւոյն ոստիկանութեան պետը քանի մը անձանց եւ Եթիոպացերեց հանրագրին հետ մէկտեղ ներս մտնել, և հրամայեց որ սայլին վրայ ծածանող դրօշն ևս վար առնուի։

Այս հրաման գործադրուելէ յետոյ, սայլն յառաջացաւ մինչեւ Երեսփխանաց դուռն, և վեց մարդիկ մեծ դժուարութեամբ հանրագիրը փոխադրեցին ժողովարանին բակը։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Պրուսէլէ կը հեռագրէ Թարգի Թարգիակը. 13 յուլիս.

Վիլհելմ Կայսր գժգոհութիւն յայտներ է առ կոմս Հէրպերթ Պիզմարք՝ Զուլցերլոյ հետ վէճին նկատմամբ կանխաւ իրեն տեղեկութիւն չտրուելուն համար, և ինքզինն այսչափ ծանրութիւն ստանալուն համար։ Կայսրն հաւատաց Շումխերը զօրավարին ի Սիկմարինկէն թէ վէճն ընդհուպ պիտի կարգադրի, և թէ մարդու միտքէ անցած չէ բռնադարել Զուլցերլոյ չէզոքութիւնը։ Կ'ըսուի թէ Ն. Կ. Վեհափառութեան այս տեսութեան համակարծիք են իւր զինուորական գլխաւոր խորհրդատուք, (որոց նշանաւորագոյնն է կոմս Վալսէրզէ, որ՝ իրօք կամ կարծեօք՝ Պիզմարք իշխանին դէմ մրցակից կը հանդիսանայ ի մասին քաղաքական ազդեցութեան)։

Պիզմարք իշխան այս դիտողութեանց պատասխանեց՝ Պերլինի կայսերական պաշտօնաթերթին մէջ հրատարակելով Պերլին գերման դեսպանին ղրկուած երեք ծանուցագրերն։ Այս պաշտօնագիրք, որք կ'ըսուի թէ կոմս Հէրպերթի Պիզմարքի գործն են, շատ մը սխալներ և հակասութիւններ կը պարունակեն եղեր, զորս կոմն Հէրպերթի և իւր հօր հակառակորդ լրագիրք խստիւ կը պախարակեն։ Կ'ըսեն թէ «Ոդիսեւսի ազեղը Տելեմաքի համար չէր շինուած»։

ԵԳԻՊՏՈՍ

Պ. Շմիտի տեղ, որ հրաժարած է, դանձային խորհրդականի վարչութեան քարտուղար Պ. Օրնշթայն Եդիպտոսի մաքսատանց վարչութեան դեր-տնօրէն անուանեցաւ։

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՎՆ Ի ՓԱՐԻԶ

Փարէզ, 13 յուլիս. —Միջազգային գործաւորական Համաժողովն որ պիտի գումարի յառաջիկայ երկուշաբթի, 15 յուլիս, բազմաթիւ անդամոց ներկայութեամբ պիտի բացուի։ Տասն տարբեր ազգութեանց կողմէ վկայագրեալ գործաւոր պատուիրակներ եկած են, բայց Անգլիացիք ամենէն շատ են։ Անգլիական 19 արհեստական միութիւնք կամ խորհուրդք ներկայացուցիչներ ղրկած են, յորս են Անգլիոյ Երեսփ. Ժողովոյ գործաւոր անդամ Պ. Պրոթ և Նմանապէս Պ. Ֆէնուիք, որ Նորթըմպրլէնտի հանքագործները կը ներկայացնէ։ Վեց տարբեր ազգային ընկերութիւնք, և Ընկերային-Ժողովրդական Դաշնակցութեան 15 մասնաճիւղք նոյնպէս պատուիրակներ ղրկած են։ Պելճիոյ գործաւորական կուսակցութիւնը, Վերվիեի և Լիէժի արհեստագործք և Լը Հէթրի հանքագործք, Իտալեան Գործաւորական կուսակցութիւնը, նաև Վիեննայի, Հունգարիոյ, Զուիցերիոյ, Մաարիտի, Պարչելոնայի արհեստական ընկերութիւնք ոմանք, Փորթուկալի

—) 27 (—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԲԻ

ՕԳԴԱՎ ՖԷՕՅԵԷ

ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻՈՅ

ԱԶՆՈՒԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Իր բնական վեհանձնութեամբ, մէկդի թողուց անձնասպասութեան խնդիրն, և առանց հոգ ընելու որ առաւել կամ նուազ արդար հաւասարակշռութիւն մը հաստատէ պատասխանատուութեանց, որոշեց անկեղծօրէն և վեհասիրտ ընդունիլ երջանկութիւնն որ վերստին կուգար իրեն։ Իր վերադարձի վայրկենին համար իր կնոջ փոխադրումն ի Ֆրէնի դղեակը, փափկանկատ հոգածութիւն մը թուեցաւ իրեն։ Հոն էր որ առաջին անգամ տեսած էին զիրար, սիրած էին, ամուսնացած էին։ Հոն էր որ վերստին պարտէին գտնել զիրար՝ վերսկսելու համար իրենց հասարակաց կեանքն և կիրպիւ իւրք դարձեալ ապրիլուրէն առնելու համար իրենց միութիւնը։ Այս մտածման մէջ սիրալիր ու գորովալի բան մը կար, և Պ. տը Ռիսա պարտք համարեց պատասխանել նմա, իր կողմէ ցոյց տալով երիտասարդ փեսայի մը փոյթ։ ռանդութիւնն և սիրագորով շնորհը։

Ուզեց իր կինն յանկարծակիի բերելու համար որոշած թուականը երկու երեք օր կանեցաւ։—Ի Բարիզ կէս օր անցուց իր ապարանքին մէջ, որուն բարեկարգութեան վրայ աքանչացաւ. երեկոյեան ժամ եօթնին, կը մեկնէր ի Ֆրէն եւ երկու ժամ յետոյ կառախումբին վար կ'իջնէր, դըղեակին ամենէն մօտ կայարանին մէջ։ Զինքը անդ փոխադրելու համար կառք չգտնելով, թեթեւոտն անդ ուղղուեցաւ զուարթութեամբ, կայարանին մէջ թողլով իր անուտները։

Գարնան շատ աղուոր իրիկուն մըն էր, զոր աղօտ իմն կը լուսաւորէին լուսնի տկար մահիկ մը եւ բիւրաւոր աստղեր։ Լիոնէլ սրտայուզութեամբ կը յառաջանար այն ճամբէն ուսկից այնչափ անցած էր իր մանկամարդ խօսեցելոյն հետ, իր տարփանց ժամանակը։ Իւրաքանչիւր քայլին միտքը կուգային սիրելի յիշատակներ,—որք այժմ յոյսեր դարձած էին վերստին։

Ծանկաբար դարաստանը մտաւ անտառին ծառուղիներէն մէկէն, եւ նորընձիւղ դալարեաց մէջէն ընդհուպ նշմարեց դղեակին լոյսերը։ Սիրոն ուժգնութեամբ բաբախեց երբ ընտանեկան սրահին պատուհաններուն մօտեցաւ։ Ներս մտնելէ առաջ՝ անդ ակնարկ մը նետելու հեռաքրքրութիւնն ունեցաւ։ Իր երեսն էր իր կինը միայնակ գտնել այս առաջին տեսակցութեան համար, բայց տիկին տը Ռիսա միայնակ չէր, և այս պարագայն չունէր արտասովոր կամ վիրաւորիչ բան մը, որովհետեւ իր ամուսնոյն չէր սպասեր։

Մնաց որ, շատ պարկեշտ եւ շատ հանդարտ վայելելէ, եւ իր գալստեան համար որոշած թուականը երկու երեք օր կանեցաց։—Ի Բարիզ կէս օր անցուց իր ապարանքին մէջ, որուն բարեկարգութեան վրայ աքանչացաւ. երեկոյեան ժամ եօթնին, կը մեկնէր ի Ֆրէն եւ երկու ժամ յետոյ կառախումբին վար կ'իջնէր, դըղեակին ամենէն մօտ կայարանին մէջ։ Զինքը անդ փոխադրելու համար կառք չգտնելով, թեթեւոտն անդ ուղղուեցաւ զուարթութեամբ, կայարանին մէջ թողլով իր անուտները։

Գարնան շատ աղուոր իրիկուն մըն էր, զոր աղօտ իմն կը լուսաւորէին լուսնի տկար մահիկ մը եւ բիւրաւոր աստղեր։ Լիոնէլ սրտայուզութեամբ կը յառաջանար այն ճամբէն ուսկից այնչափ անցած էր իր մանկամարդ խօսեցելոյն հետ, իր տարփանց ժամանակը։ Իւրաքանչիւր քայլին միտքը կուգային սիրելի յիշատակներ,—որք այժմ յոյսեր դարձած էին վերստին։

Ծանկաբար դարաստանը մտաւ անտառին ծառուղիներէն մէկէն, եւ նորընձիւղ դալարեաց մէջէն ընդհուպ նշմարեց դղեակին լոյսերը։ Սիրոն ուժգնութեամբ բաբախեց երբ ընտանեկան սրահին պատուհաններուն մօտեցաւ։ Ներս մտնելէ առաջ՝ անդ ակնարկ մը նետելու հեռաքրքրութիւնն ունեցաւ։ Իր երեսն էր իր կինը միայնակ գտնել այս առաջին տեսակցութեան համար, բայց տիկին տը Ռիսա միայնակ չէր, և այս պարագայն չունէր արտասովոր կամ վիրաւորիչ բան մը, որովհետեւ իր ամուսնոյն չէր սպասեր։

Մնաց որ, շատ պարկեշտ եւ շատ հանդարտ ընկերութեան հետ էր։ Իր շուրջն ունէր մայրը, երկու զաւակները, տիկին տը Լոռիս, Պ. տը Ռիվէրն, եւ ուրիշ ոչ ոք։ Ընդարձակ սրահին մէկ ծայրը, տիկին Ֆիֆ-Ժէռալ եւ տիկին տը Լոռիս դաշնամուրին վրայ «նոթ» մը կը նուագէին չորս ձեռքով։ Զմմնէին մօտ, սեղանի մը առջև, տիկին տը Ռիսա շնորհալի կերպիւ ծուռը դրած էր ցած աթոռակի մը վրայ, մէկ ձեռքն իր զաւկին խարտեաշ գլխուն վրայ դրած, մինչդեռ իր աղջիկն երկու քայլ անդին նստած էր Պ. տը Ռիվէրնի ծունգերուն վրայ։ Լամպարին տակ տարածուած պատկերազարդ մեծ գիրք մը կը քննէին, և կ'երեւի թէ Պ. տը Ռիվէրն շատ հետաքրքրաշարժ բացատրութիւններ կուտար իրենց, երկու տղայոց և իրենց մօր խորապէս ուշադիր դէմքէն դատելով։ Մերթ ընդ մերթ, այդ վայրկեան սիրուն գլուխները վեր կ'ելնէին՝ հարցում մը կամ ծպտա մը ուղղելու համար մեկնիչին։

Այս տեսարանն աշխարհային ցոփ կեանց ոչ մէկ հանգամանք կը ներկայացնէր, և սակայն դժգոհութիւն սաստիկ զգայնութիւն մը անցաւ Պ. տը Ռիսաի սրտէն։ Այս փոքր գումարման, և մանաւանդ տիկին տը Ռիսաի ու Պ. տը Ռիվէրնի կազմած խմբակին մէջ բարեբաստիկ ու խաղաղ մտերմութեան այնպիսի երեւոյթ մը կար որ պարզապէս տխմարութիւն էր վերադրել զայն անակնկալով մը, որչափ ալ հաճելի ըլլար այն։

Պ. տը Ռիսա պատուհանին քովէն հեռացաւ սրտնեղութեան շարժումով մը։ Յետոյ, քանի մը քայլ առնէ վերջ, վերբստին հոն դարձաւ. ցորչափ կը դիտէր իր աչաց առջեւ պարզուող ընտանեկան տեսարանը, պարզ սրտնեղութենէ մը աւելի ծանր եւ աւելի խորին զգացում մը ի յայտ կուգար իր դիմագծերուն վրայ, եւ իր ճակատը վշտագին կերպիւ կծկուեցաւ երբ տեսաւ իր երկու զաւակներն, որոց համար պահելու ժամն եկած էր, Պ. տը Ռիվէրնի վզին փաթթուիլ եւ գգուանքներով շղթել զայն։

Նոյն վայրկենին թէյ բերուեցաւ։ Լիոնէլ ենթադրեց որ տիկին տը Լոռիս և իր եղբայրն ընդհուպ հրաժեշտ պիտի առնուին, եւ որոշեց իրենց մեկնման սպասել՝ իր կնոջ դիմացն ելնելու համար։ Ամենէն մօտ ծառուղւոյն մէջ մտաւ, եւ սկսաւ անդ պտըտիլ խորհրդածելով։

Քանի մը վայրկեան յետոյ, իմացաւ դարաստանին վրայ նայող ապակեայ դըռան բացուիլն, և տեսաւ որ նախ անկից դուրս ելաւ տիկին տը Լոռիս, յետոյ իր կինն որ Պ. տը Ռիվէրնի թեւին կը կրթնէր։ Իրենց քալուածքին ուղղութենէն հասկըցաւ որ տիկին տը Լոռիս և իր եղբայրը, գիշերուան գեղեցկութենէն հմայուած, հեռուան կը վերադառնային Տաղաւարն, և թէ տիկին տը Ռիսա, ըստ երեւոյթին, անոնց կ'ընկերանար մինչեւ դարաստանին վանդակաղուռը։ Թող տուաւ որ հեռանան, և ապա մեղմիւ հետեւեցաւ անոնց, ոչպէս զի իր կնոջ ճամբուն վրայ գտնուի դղեակ վերադարձած ատեն։ Բաղդը վերջապէս իրեն համար կը պատրաստէր այս առաջին առանձին տեսակցութիւնն որում մէջ ամենօրեայ ինչ մը չի կրնար պատահիլ։ Ինքն իսկ իր այդ գորովալի տրամադրութիւններն հաստատած էր իր վերջին ժամու նամակին մէջ։ Ուստի համոզուեցաւ թէ իր յանկարծական անվստահութիւնը մեղսապարտ անարդարութեան և տպերախտութեան չարժում մըն էր։ Տիկին տը Ռիսա, ամէն կանանց պէս, արտասուելու հակամէտ էր. անչուշտ այդ վայրկենին տեղի կուտար ջղային մեծամտութեան տագնապի մը։ Թերեւս վերջին հաւաչանքով մը կը յիշէր իրեն զրկած հաճոյքներն, և այդ վիշտն իսկ կը հաստատէր իր անձնուիրութեան բոլոր արժանիքը։

Նոր ցնորքներէ խոյս տալու համար, Լիոնէլ ընդոստ դուրս ելաւ ծառերուն ստուերէն, և ուղղուեցաւ դէպի գեղեցկան նըստարանը՝ ծառուղւոյն ամենէն լուսաւոր մասին հետեւելով։ Ի՞նչ նորա քայլափոխերուն, տիկին տը Ռիսա ոտք եղած էր յանկարծակի։ Լիոնէլ ձեռքն անոր կարկառեց բարեկամական շարժմամբ մը, և հեռուէն խօսեցաւ նմա զուարթ ձայնով մը։

—Նստ աղայութիւն պիտի համարիք ըրածս... ուզեցի յանկարծակիի բերել զձեզ...

Մանկամարդ կինն աչխուժիւ սրբեց աչքերն եւ անոր ընդառաջ եկաւ. Լիոնէլ անոր երկու ձեռները բռնեց, եւ զգալով որ կը դողդղար.

—Ատտուած իմ, սիրելիս, յարեց, ո՞ր չափ անձարակ եմ... Վախցուցի՞ զձեզ։

—Բիչ մը, մրմնջեց, բնաւ չէի սպասեր... Տեսէք, կը դողամ...

—Զէ՞ք համբուրեր զիս, Մաո։

—Ներողութիւն։

Եւ ճակատը կարկառեց նմա։

(Շարունակելի)

գործաւորական միութիւնն և Ամերիկայի Աշխատութեան Ասպետք ամենքն ևս պատուիրակներ ղրկած են և կը ղրկեն հետզհետէ։ Ուրիշ ազգերու կողմէ ևս հաւանութիւնք կը սպասուին։ Հարիւր հինգ հատ Փարիզեան արհեստական միութիւնք ղրկած են 253 պատուիրակներ, և 17 գաւառային քաղաքներու արհեստական միութիւնք ևս պատուիրակներ ղրկած են, յորս կան ձէղպիրեան ութ պատուիրակներ։ Ներկայացուցիչներ ունին նաեւ չատ մը գործաւորական ակումբք։ Ի մի բան, ցայսօր 227 ընկերութիւնք, հաստատեալք 59 տարբեր քաղաքաց կամ արհեստական կեդրոնաց մէջ, ղրկած են 470 պատուիրակ։

—Փարիզի մէջ գործաւորական Համաժողովոյ մը գումարման առթիւ կ'ըսուի թէ առաջիկայ դարձան թողուած է Պերլին մէջ (Զուիցերիա) Գործաւորական Դեսպանախորհրդոյ գումարումն, որուն Միաց։ Նահանգներն ևս հրաւիրուած են։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Եկեղեցական վարժարանի խնամակալութիւնն երէկ իւր շաբաթական նիստը կատարեց ի խորհրդարանի Դալաթիոյ, ընդ նախագահութեամբ Ամեն։ Ս։ Պատրիարք Հօր։

Խնամակալութիւնը վերջնապէս որոշեց վարժարանի համար պէտք եղած Արմաչու Վանուց նորոգութիւններն և փոփոխութիւններն, և յանձնարարեց նոցա գործադրութիւնը Նիկոմիդիոյ քաղաքային ճարտարապետ Պետրոս Էֆէնտիի։

Նիկոմիդիայէն առնուած նամակներ եւ հեռագրեր կը ծանուցանեն թէ ազգային մարմնոյ մէջ խռովութիւնք ծագեր են, և ասոնց վրայ ազգային վարժարանները փակուեր են։ Քանի մը խռովարարներ Առաջնորդ Սրբազան Հօր դէմ ժողովրդեան միտքերը դրգռելու ջանքեր կ'ընեն եղեր։ Ցուսալի է որ Նիկոմիդիոյ հասարակութիւնն ապարդիւն կը թողու այդ ջանքեր եւ կը համախմբուի իր Առաջնորդին չուրջ, որ տասնեւութ տարիէ ի վեր հաղուագիւտ կանոնաւորութեամբ եւ անձնուիրութեամբ կը վարէ այդ բազմահոյ դաւառը։

Աղէքսանդրիայէն մեր Մասնաւոր Թղթակցին յուլիս 30 թուականաւ մէկ նամակը կը ծանուցանէ թէ Երուսաղէմայ Պատուիրակութիւնը Խոիվիէի ընկերութեան շրջանեաւով Աղէքսանդրիայէն մեկնելով յուլիս 5/17 ին չորեքշաբթի օր, մայրաքաղաքս պիտի ժամանէ յուլիս 10 երկուշաբթի առաւօտ։

Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց ուսուցիչ Բրոթ. Գրիգոր Խալաթեան, որ ծանօթ է հայ լեզուի և մատենագրութեան վրայ իր զանազան հմտալից աշխատութեամբք, այս առաւօտ մայրաքաղաքս եկաւ եւ ինչաւ յ'Օգէլ «Անկլէս»։ Պ. Խալաթեան երկու շաբաթի չափ պիտի մնայ մայրաքաղաքս, ուսկից պիտի ուղեւորի ի Կաւկասիա։

Սիլիվրիէն կը հաղորդեն մեզ թէ Գեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան անցեալ երկուշաբթի օր անդ ժամանելով, եօթն անձերէ բաղկացեալ Թաղական Խորհուրդ մը կազմեր է։ Տեղւոյն Ասքանազեան մանչ տղայոց վարժարանը 50 ոսկւոյ ծախքով նորոգուած է մէկ ամիս առաջ. այս ծախքը հոգացուած է ժողովրդեան հանգանակութեամբ և մաս մ'ալ Սիլիվրիի նաւամատոյցին տուրքէն, (նաւամատոյցին տարեկան տուրքը 200-250 ոսկի է և բաժնուած է։ մէկ բաժինը հայոց կը տրուի, իսկ միւսները թուրքաց, յունաց և հրէից վարժարաններուն։) Տ. Հմայեակ եպիսկոպոս տեսնելով որ ի Սիլիվրի աղջկանց վարժարան չկայ, ձեռնարկած է վարժարան մը հաստատել։ 200 տան հայ կայ անդ և առնուազն 100 աղջիկ ուսանող կը գտնուին։

Դիմաքսեան Սրբազան տեղւոյն Նիւթական մատակարարութիւնն ևս բաւական կանոնաւոր վիճակի մէջ դրած է։ աշակերտաց համար ամենաոչակի դրութիւնն հաստատած եւ օգտակար միջոցներ ձեռք առած է տեղւոյն վարժարանաց համար։ Ի մեռոյ պիտի ձեռնարկուի աղջկանց վարժարանի համար սրահի մը շինութեան։ Նոյնպէս վարժարանին կից 800-1000 կանգուն դետին մ'ալ պարտէզի պիտի վերածուի։

Գեր։ Հմայեակ եպիսկոպոս յառաջիկայ շաբթու կը մեկնի ի Ռոտոսթօ և ապա ի Մալկարա եւ Զորլու։

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Խնամակալութիւնս պատիւ ունի ծանուցանել Ազգայ հասարակութեան թէ Ազգ։ Կեդր։ Վարժարանի Նախապատրաստական, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ դասարանները կազմուած լինելով, աշակերտիլ փափաքողք կը հրաւիրուին օգոստոս 16 էն սկսեալ չորեքշաբթի և շաբաթ օրերը առաւօտէն մինչեւ կէս օր ներկայանալի վարժարանն, արձանագրել տալու համար իրենց անունները և տանալու համար հարկ եղած տեղեկութիւնները։

Մտից քննութիւնք պիտի կատարուին օգոստոս 28 ի երկուշաբթի օրն առաւօտեան ժամ 2էն սկսեալ։ Դասախօսութիւնք պիտի վերսկսին սեպտեմբեր 1 ին, ուրբաթ առաւօտ, իսկ արդէն ընդունուած աշակերտք կը հրաւիրուին օգոստոս 30 ին չորեքշաբթի օրը ներկայանալ ի վարժարան իրենց թոշակները վճարելու և նոր մտից տոմս ստանալու համար։

* * *

Ազգ։ Կեդր։ Վարժարանի տարեկան հարցաքննութիւնք աւարտած ըլլալով յունիս ամսոյ մէջ, յուլիսին կը կատարուին Կեդր։ Նախակրթարանի քննութիւնք ըստ հետեւեալ կարգացուցի։

Դ։ ԿԱՐԳ

Ցուլիս 4 Գշ։—Պատմութիւն, Աշխարհագրութիւն։

Ցուլիս 7 Ուր։—Օսմաներէն, Օսմ։ Գեղագրութիւն, Գծագրութիւն և գեղագրութիւն։

Ցուլիս 11 Գշ։—Կրօնագիտութիւն, Ֆրանսերէն և թուագիտութիւն։

Ցուլիս 14 Ուր։—Հայերէն։

Գ։ ԿԱՐԳ

Ցուլիս 4 Գշ։—Կրօնք և Հայերէն։

Ցուլիս 7 Ուր։—Թուագիտութիւն եւ Իրագիտութիւն։

Ցուլիս 11 Գշ։—Պատմութիւն, Աշխարհագրութիւն, և Ֆրանսերէն։

Ցուլիս 14 Ուր։—Օսմաներէն, Օսմ։ Գեղագրութիւն, Գեղագրութիւն, և Գծագրութիւն։

Բ։ ԿԱՐԳ

Ցուլիս 4 Գշ։ —Կրօնագիտութիւն։
» 7 Ուր։—Գեղագր։ և Իրաւագ։
» 11 Գշ։ —Պատմ։ և Աշխարհգ։
» 14 Ուր։—Հայերէն և Թուագ։

Ա։ ԿԱՐԳ

» 4 Գշ։ —Կրօնք։
» 7 Ուր —Գեղագր։ և Թուագ։
» 11 Գշ։ —Հայերէն։
» 14 Ուր։ —Իրագիտութիւն։

Քննութիւնք պիտի կատարուին առաւօտեան ժամ 9—12, բարձրագոյն դասարանին համար գրաւոր, միւսներուն համար բերանացի։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Պէրլինի կուսակալ անուանուեցաւ Եէմէնի նախկին կուսակալ Ազիզ փաշա։

Պիթլիսի կուսակալ անուանուեցաւ Պէրլինի կուսակալ Բէուզի փաշա։

Մուսուլի կուսակալ անուանուեցաւ Թահիր փաշա որ ցարդ առժամաբար կը վարէր այդ պաշտօնը։

Սուրիոյ Հայֆա գաւառակին գայմագամ անուանուեցաւ Հումսի գայմագամ Իհսան պէյ եւ նմա յաջորդեց Հայֆայի գայմագամ Մահմուտ պէյ։

— —

Սանկտ Էլիզաբեթ ասոլիճան տրուեցաւ Քարբերդի թղթատարատան եւ հեռագրատան տնօրէն Պէյալ էֆէնտիի։

Սալիսէի ասոլիճան՝ Այտընի Թավաս գաւառակին Իսաբէի ժողովոյ անդամ Հաճի Հիւսէյին աղայի, Քարբերդի հեռագրատան պաշտօնեայներէն Հասան Գասրի էֆէնտիի, Գոնեայի երեւելիներէն տեղւոյն Մէարիֆի ու գաղթականաց ղեկուցման ժողովոյ անդամ Հաճի Միհտաթ էֆէնտիի, և Ատանայի ձէպելը Պերէքէթ գաւառին Խասա գաւառակին երեւելիներէն Գարապէյլատէ Եուսուֆ Զիհէատտին պէյի։

— —

Երկրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Մանասդըրի երեւելիներէն Ռիզա պէյի և Պէրլինի առեւտրական դատարանին նախագահ Ապտիլղատէր էֆէնտիի։

Չորրորդ կարգի Օսմանիյէ՝ Տրապիզոնի նահանգին ոստիկանապետ Մահմուտ Նէմիզ էֆէնտիի։

Չորրորդ կարգի Մէճիտիյէ՝ Կիպրոսի առեւտրական գործակալ Հաճի Ահմէտ Տէրվիշ էֆէնտիի։

— —

ԻՄԹԻԱԶԻ ՇՐԱԴՐԱՄ

Վեհ։ Սուլթանն Իմթիազ պատուանշանի ոսկի չքադրամը շնորհած է նաւային գնդապետ Օսման պէյի, փեսայ Ծովային նախարար Վսեմ։ Հասան փաշայի։

Ինչպէս յայտնի է, Օսման պէյ Էրթուղրուլ մարտանաւով ճարտն ուղեւորեցաւ Մէքատային յանձնելու համար Վեհ։ Սուլթանին կողմէ նուիրեալ Իմթիազի պատուանշանը։

— —

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքիս մէջ հեռագրական նոր գործակալութիւն մը հաստատուած է, Աժան Թէլէֆոֆէ Օրիանթալ, զոր պիտի վարէ Պ։ Լ։ Ռուսէլ, Բարիզի Աժանս Ֆուրնիէի պաշտօնեայներէն։ Աժանս Ֆուրնիէ 12 տարիէ ի վեր դպրութիւն ունի ի Ֆրանսա եւ մասնաւոր պայմանագրութեամբ կապուած է Լոնտոնի, Պերլինի, Վիեննայի, Հռոմի, Մադրիտի, Բեռլսպուրգի, Նիւ-Եորքի առաջնակարգ տուներուն հետ, անկախ բոլորովին քաղաքական եւ սեղանաւորական կուսակցութիւններէ։ Աժանս Ֆուրնիէ հարկ դատած է մասնաճիւղ մը հաստատել ի մայրաքաղաքիս, ի նկատ առնելով կ։ Պոլիս եւ բոլոր Արեւելք ղրկուած հեռագրական լուրերու եւ տեղեկութեանց անբաւականութիւնը։

— —

ՍՈՒՐԻԱ

Դամասկոսի հեծեալ ոստիկանութեան պետ Ֆէյզի փաշա, որ Սալդ ղրկուած էր աբար ցեղերէն գանձելու համար ոչխարի և այլ դանձային տուրքեր, կը հեռագրէ Դամասկոսի կուսակալին որ Շարարագի ցեղերը, զորս Ն։ Վսեմութիւն իր քով կոչած էր այդ տուրքերն ստանալու համար, դիմադրեր են ոչխարներն համրելու պաշտօն ունեցող հարկահաւաքներուն, և հրացան պարպելով զինուորներու վրայ, անոնցմէ երկուքը վիրաւորեր են։ Զինուորներն յայնժամ պատասխաններ են և չորս հոգի սպաններ ու վեց հոգի վիրաւորեր են։

Զինուորական իշխանութիւնը գրաւեր է վեց Մարգիների հրացան։ Բացատի երկու հարիւրէ աւելի ուղտ գրաւեր են այդ ցեղէն, ի վճարումն տրոց։

Վիրաւորեալներու մէջ կը գտնուի Զէյնի ցեղապետ Շէյխ Քամայի որդին, Ահմէտ, որ քաջութեան մեծ համբաւ կը վայելէ Արաբաց մէջ, և որ, իրօք, սարսափելի աւազակ մէն է։ (Սէրվէր)

— —

ՊԱՒԻԵՐԱՅԻ ՆՈՒԱԳԱԾՈՒՐ

Պաւիերայի արքունական պահակազօրաց նուագածուաց խումբն, որ մէկ քանի շաբաթէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իրիկուն ժամ կէսին Վիեննա ուղեւորեցաւ Եւրոպական կառախումբով։

Նուագածուաց խումբը մեկնելէ առաջ երկաթուղւոյ կայարանին դէմ դտնուած սրճարանին մէջ նստելով, երեք անգամ Համիտիյէ քայլերգն և յետոյ ուրիշ գեղեցիկ կտորներ նուագեց։ Այս միջոցին երկաթուղւոյ ընկերութեան կողմէ հրաւաղութիւնք եղան։ Նուագածուք վակոնները մէջ զետեղուելէ յետոյ դարձեալ երեք անգամ Համիտիյէ քայլերգը նուագեցին և երեք անգամ «կեցցէ» գոչեցին։ Երկաթուղւոյ ընկերութիւնը մինչեւ Պելգիայի համար կէս տոմսակ տուած է պաւիերացի նուագածուաց։

— —

ՄԱՐՍ-ՔՈՍԹՐՈՄԱՑԻ ԴԱՏ

Ռուսական հիւպատոսական դատարանին նախընթաց աւուր նստին մէջ, Ռաֆրամայի փաստաբան Պ։ Միհէլի քննեց փորձագիտաց տեղեկագիրն և դէմ խօսեցաւ Մարի փաստաբան Պ։ Բէտրելլիի, որ կը ջանար բացորոշապէս հերքել այդ տեղեկագրին եզրակացութիւնները։

Դատաւորք ապա քաջուեցան խորհրդակցութեան սրահն և քանի մը վայրկեան յետոյ վերադարձան ատեանը։ Նախագահ Պ։ Լակովգի ծանոյց թէ դատարանը պիտի խորհրդակցէր, այլ ժամանակն ուշ լինելով, երկուշ կողմանց պիտի ծանուցուի այն օրն ուր պիտի դան իմանալ դատարանին որոշումը։

— —

ՈՂԻՄՊՈՍ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ ԿՈՐՍՈՒԱԾ

Անգլիական դեսպանատան երկրորդ թարգման Պ։ Ալոք, որ Պրուսա գնացած է գտնել տալու համար Ողիմպոս լերան վրայ կորսուած անդլիայի ուղեւորը, Պ։ Մագմիլլան, փոխթեանդն ալոկցութիւն մը դտած է Պրուսայի կառավարչէն, որ հետազօտութեանց համար հնծեալ ոստիկաններ ղրկեր է Ողիմպոս լեռը։ Անդ հաստատեալ ալպանիացի հովուաց և փայտահարաց պետն ևս շատ օգներ է հետազօտութեանց, բայց ամէն ջանք ի դերեւ ելեր են։ Մինչեւ երէկ իրիկուն նոպատուոր լուր չէր եկած անդլիական դեսպանատունը։

— —

ԿԵՂԾՄԱՇՆՈՒԹԻՒՆ

Քաղաքապետութիւնը, տեղեկանալով որ ի Գուզկունճուգ կեղծմաշկութիւն (ֆոալ պրոշ) երեւան եկած է թէ Սթավրոյ թաղին մէջ երկու մանուկներ այդ հիւանդութենէ բռնուելով մեռած են, հարկ եղած հրահանգը տուաւ որոց որ անկ է՝ այդ տարափոխիկ ախտին առաջքն առնլու համար։

— —

ՄԱՐԱԽՆԵՐԷՆ ԿԵՐՈՒԱԾ

Եգեսիայէն կը գրեն մեզ յունիս 24 թուականաւ։

Սեւերեկ գաւառին պատկանեալ քաղաքիս մերձակայ Գարճա – Վէրէն գիւղին մէջ անցեալներն երկու քուրդ մայրեր գիւղացւոց մի ընդհանուր սովորութեան համեմատ իրենց մէկ եւ մէկ ու կէս ամեայ տղայքը վրանին տակ անխնայմ միանակ թողլով մտակայ արաբ հուն՝ ի՛ երթան։ Քիչ մը վերջ այդ տղայք թէեւ կը սկսին լալ, բայց գիւղացի մարք սովոր լինելով գործի ատեն տղայոց լացին ականջ չկախել, անտարբերութեամբ կը շարունակեն աշխատիլ, մանաւանդ կարծելով թէ քնացած են, երբ քիչ մը յետոյ անոնց ձայնը կը դադրի։

Բայց ճաշի ատեն, երբ վրանը կը վերադառնան, իրեղ տղայոց անհամար մարախներէ պաշարուած և ծակծկուած անշունչ դիակներն եւ եւթ կը գտնեն։

— —

Անցեալ յունիսի 15ին Մարաշի մէջ հրդեհ ծագելով քսան տուներ այրեր են։ Հրդեհի միջոցին կին մը և տղայ մը բոցերուն մէջ մնացեր են։ Հրդեհն առաջ եկեր է սկիառէ։ Տեղական կառավարութիւնն հանգանակութեան ձեռնարկած է հրկիզելոց բաշխուելու համար։

—Երէկ առաւօտ եէնիմահալէէ մեկնող Շիրքէթի 19 թիւ շոգենաւը Թարապիոյ նաւամատոյցին մօտեցած պահուն, դպրոցական աղջիկ մը ծովն ինկաւ։ Նաւաստիք անմիջապէս օգնութեան փութալով ազատեցին զնա։

—Դատական նախարարութեան բարպանաց պետ Հիւսնի էֆէնտի անցեալ օր ի Գատը գիւղ ձիով անցած պահուն գետինն խնալով, բաւական ծանրապէս վիրաւորեցաւ։

—Ֆէրիդ Հոպէ փաշա իւր տունն, ի Թաղիմ, վաճառած է Հարպային Պարտուց Վարչութեան տնօրէն Սէլիմ Մէլհամէ էֆէնտիի։ Կ'ըսուի թէ Հոպէ փաշա ի Պոլիս ձաղալ Օղլու տուն մը վարձելով իւր բնակութիւնն անդ պիտի փոխադրէ։

—Պրուսայի Էրթուղրուլ գաւառին Սէյիւտ գաւառային շրջակայքը նոր գիւղ մը հաստատուած է Թրնովայի գաղթականաց համար։ Այս գիւղ գաղթականաց վարչութեան նախագահին անուան նուիրուելով Ռիզա Փաշա կոչուած է։

—Երկուշաբթի օր ժամ 11ին ի Պալատ Թաշ Իսքէլէլի առջեւ մարդու մը դիակը գտնուեցաւ։

—Հալէպի նահանգին Թաշ Ուէզը անուն նաւամատոյցին մէջ հեռագրական կայարան մը հաստատուած է, ուր ամեն տեսակ հեռագիրք պիտի ընդունուին։

—Երէկ ժամ 7ին ի Թոր Գարու գինետան մը վերի յարկը բռնկեցաւ։ սակայն դրացիք և ոստիկանք ժամանակին հասնելով վտանգին առաջքն առին։

—Երզնկայի նախկին նախարար Զիւհտի փաշա իւր անձնական ծախիւք վարժարան մը կառուցած է ի Գատը գիւղ Օլսլամարլը Զէյմէ։ Բացման հանդէսը մէկ քանի օրէն պիտի կատարուի։

—Ինչպէս կը յիշուի, անցեալները ի Գատը գիւղ Գարագոլ փողցին մէջ ծագած հրդեհին առթիւ Պ։ Ֆ։ Ա։ ձերբակալուած էր ամբաստանուելով թէ այդ հրդեհին պատճառ տուած է դիտմամբ բռնկեցնելով իւր տունն որ ապահովագրեալ էր։ Արդ Մէրու

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Տոքթ. Վահրամ Է.Քէէնտ Թորգոմեան, իւր ուսանողութեան միջոցին ի Բարիզ, Ազգային Մատենադարանին ձեռագրոց մէջ գտած էր հայ բժշկարան մը և մասամբ ընդօրինակած զայն։ Յարգոյ բժիշկը վերջերս իւր ընդօրինակած այդ մասը նամակաւ մը ղրկած լինելով Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեանի, նամակ մը ստացած է անկից։ Այդ երկու թղթակցութիւնք մեր ձեռքն անցած լինելով, կը փութանք հրատարակել ի սորեւ։

ԻՒՍԿԻՒԻՏԱՐ 15 Ապրիլի 1889

ԹՈՒՂԹ

Առ վերապատուելի
Հայր Ղեւոնդ Վարդապետ Յովնանեան
ի Վիեննա
ի Վանս Մխիթարեանց

Վերապատուելի Հայր,

Սիրահար Հայ բժշկական պատմութեան անցելոյն յայտնութեան, հաւատարիմ վերծանող Ձեր գիտական գրութեանց՝ զորս հրատարակէք այս Ամսօրեայ պատուական Հանդէսիդ մէջ, կը համարձակիմ Ձեր ուշադրութեան հաղորդել սա յետագայ Դէջ Մաբրաքուշեան անուն հատուածը բժշկական՝ զոր Փարիզու Bibliothèque nationaleի հայ բժշկական ձեռագրոց մէջէն կ'ընդօրինակէի ես 1882 թուին։

Ձեր յայտ թէ որո՞ւ է գրուածը. տեղեկութիւններ կը պակասէին, և ես չէի կարող շատ հետամուտ լինել դոցա, աւելի ջանադիր լինելով ժամ յառաջ ընդօրինակել աւարտել ձեռագիրը, զոր և աւա՛ղ չի կարողացայ, անակնկալ պատճառներով։

Այս հատուածը, բժշկական այլ և այլ նիւթոց վրայ գրուած ուրիշ չորս հինգ հատուածներու հետ ի մի կազմեալ ամփոփեալ էր միչակ հատորի մը մէջ։ Նոտարգիր էր այն, դժուարաւ վերծանելի և տեղ տեղ բոլորովին աւրուած։ Հատորին մէկ կողմը Manuscrit du 6ième siècle tiré de Gallien, ուրիշ տեղ մը Manuscrit du 17 iéme siècle ֆռանսական տողերը։ Ձեր ուսումնական հետազօտութեանց թողլով դատել թէ քանի՞երորդ դարու է այս ձեռագիրը, փութամ նշանակել Ձեզ զոր ինչ ընդօրինակած եմ։

«ԳԻՐ ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

«Ստուգիւ ճարտարօք ընտրած իմաստասիրաց և բժշկական վարդապետաց հելլենացոց և յունաց և եւրայեցոց վարդապետաց և իմաստուն բժշկաց ընտրած յիմանալոյ զտնութիւն մարդոյ։ Զստեղծուածքն զանգամքն, և զտնութիւնքն, զօդուածքն և զվիլուն, զլեղն, և զվբրհեղն, թէ որպէս գոյացան, և զինչ ի սոցանէ ի միմեանս բնութիւնս կամ զգործս թէ որպէս ոռոգանեն։

«Եւ զցաւոց շարժմունսն, և զդեղերսն օգտակարութիւնն զոր իմացեալ գրեցին բժշկապետքն, Գաղիանոս, Արիստոտէլ, Բագարատ, և ի սոցանէ սփռեցան յամենայն ազգս, ի յոյնս, և յասորիս, և ի պարսիկս, և ի հնդիկս և ի հելլենացիս և արաբիկս, և յայլս սփռեցան ընդ ոլորտս տիեզերաց։

«Շնորհաց աւուղին ի վերուստ, եղեն ճարտարք ազգս ազգաց և ի սոցայ հրամանէն և բանիցն, քննեալ ըստուգեցին և իմացեալ ճարտարութեամբ։

«Ընդ որս և մի ի նոցանէ որ կոչի Ապուսայիդ զանդիկ ոմն, հռոմ ոմն, ի բազում գրոց ժողովեաց զստակն զայս բանքս, համառօտ ետ մեզ, զուղղորդն եւ զկարճն, ի գովութիւն և ի փառս Աստուծոյ, որ ստեղծեաց զարարածս և զարգարեաց որպէս փեսայ, զոր և կամեցաւ արար։ և զորս հրամայեաց հաստատեցաւ, և ո՞վ ոք քննեսցէ զարարս նորայ։

«Արար Աստուած զերկինս և զերկիր զծով, և զցամաք, զհրեղէնս և զհողեղէնս, զհոգեւորս և զնիւթաւորս, զանասունս, և զթռչունս, զսողունս և զգեռունս։

«Արար և զդամային զմարմինս, ըստ պատկերի իւրոյ, և եդ ի վերայ նորա սիրել զԱստուած և պահել զպատուիրանս նորայ, և ետ իմաստութիւն և հանճար մարդոյն, գտանել զբժշկութեան արուեստն։ Եւ ի ձեռն բժշկական վարդապետականութեան, և զդեղոցն զօգտութիւն պատրաստել մարմնոյն առ ի պէտս առողջութեան։ Զի ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութեան, առցէ զբժշկութիւն հոգւոյ, և ի ձեռանէ բժշկապետին առցէ զբժշկութիւն հոգւոյն և մարմնոյն և զառողջութիւն և որ ոչ է առողջ հոգւով ո՛չ կարէ ծառայէ Աստուծոյ։

«Ասէ իմաստունն Գաղիանոս, թէ ըստեղծեաց Աստուած զմարդն որպէս քաղաք մի, որ լինի իւր դուռն ԺԲ. և այն դռներուն ելանեն հանապազ դեղերն, որ անձինն օգտութիւն հանապազ իւրմէն լինի։

«Երկու փտակ մեծ երկու դէն մանացը և ամէն դէն մանացն ՃՁ., վտակ ի բոց կայ որ անդամքն յիւրմէն նիւթ քարշեն, և այնու գոյանայ մարմինն, Մինը չնչերակք են, Շի ակն է ի մարմինն որ ի յինքն իւրք բուսանին և զօդուածք Մինը որ կրեն ԻԸ լուծք ջիղին։

«Այս ամէնս, ՃԷ անդամն կայ ի մարդը, ՃԿ երակ կան ի չարժման ի գնացք, որ մինն յիւրմէն բուսանի։

«Եւ զայդ ԺԲ դուռդ զոր յառաջն յիշեցաք, Բ, ի նոցանէ աչք են, և Բ, ականջքն են, Բ, քթոց փողքն են, Ա, բերանն է և Բ, ծիծն, Ա, պորտն և Բ ջրհեղն արտաքս ելանեն, Ա առաջինն և Ա յետինն. Զշ կաթ արիւն յօրինեաց Աստուած և ամէն կաթ արիւն մթխալ մի եւ իւր տանուտէրն զտարչան եդեր որ է փայլածումն և Զ. Ճ. կաթ արիւն այլ արար Աստուած և իւր տանուտէրն զհալն եդեր որ է երեւակն, ՃԿ, մթխալ զլեղն յօրինեաց Աստուած և իւր տանուտէրն զլուսինն եդեր։

«Եւ զմարդոյն մարթն տաք արար Աստուած և չոր և իւր տանուտէրն զարեգակն եդեր, և որպէս Դ հողմն որ ի չուրջ գնան ի վերայ երկրի յարեւելից, և արեւմտից, ի հիւսիսս և հարաւոյ։ Նոյնպէս և ի մարդոյն անձն Դ հողմն յօրինեաց Աստուած, որպէս Դ ջուրրք աշխարհիս աղի և լեղի և քաղցր և հոտած։

«Եւ որպէս տարիւ, Դ եղանակ է, գարուն, աշուն, ամառն և ձմեռն, նոյնպէս և մարդոյն բնութիւնքն ի Դ եղանակս բաժանին, արիւն և խարտաշ մաղձն, պղղոմն և սեւ մաղձն։

«Յորժամ ստեղծեաց Աստուած զԱդամ, գարուն էր և գիշերն և ցորեկն հաւասար էին միմեանց։

«Եւ արեգակն առաջին տարաման էր ի խոյն և գարնան բնութիւն տաք է գէջ, և ամառանն տաք և չոր, աշուն հով է և չոր, ձմեռն հով է և գէջ։

«Այլ և կենդանութիւն մարդոյն տաք է գէջ որպէս մուշտարին տաք է եւ գէջ։ Եւ աշունն հով է և չոր, և զոհալն հով է և չոր, են մահն հով է եւ չոր, զի զոհալին բնութեամբն է։

«Յորժամ գարուն լինի ամենայն զոր դալար դառնայ, եւ բուսանին ի գետնէն ի վեր և ամէն շնչաւորք շարժին, և արիւնն և մաղձն զիրարին և շարժին խառնուած մարմնոյն, նոսրանան և արիւնն եւ մաղձն ջրանան, վասն այն շնչաւորք շարժին, յերկրի եւ ամենայն սողունքն։

«Զի յորժամ ստեղծաւ մարդն ադամ, և այս ամենայն գոյացան նիւթք գարուն էր։ Վասն այնորիկ ամենայն բժշկապետք եւ գիտունք ի գարնան աւուրքն դեղ առնուն և երակ, զի ամենայն բնութիւնք մարդկան այս աւուրքս զիրարին։

«Եւ զդ. հողմն զոր յիշեցաք յառաջն այսպէս խմացաք զի օդն արեւելից տաք է գէջ և օդն արեւմտից հով է և չոր եւ օդն հիւսիսոյ հով է և գէջ եւ օդն հարաւային տաք է եւ խոշակ։

«Եւ յորժամ զաւակն ի մարէն ծնանի, իւր տանուտէրն օդն արեւելից լինի որ տաք է եւ գէջ նոյնպէս եւ տղին բնութիւն մինչեւ հաստատի տաք եւ գէջ լինի։

«Ապայ երբ մտանէ երիտասարդական հասակն, որ է երկրորդ մասն, իւր տանուտէրն օդն հարաւային լինի։ Նոյնպէս եւ իւր բնութիւն տաք եւ չոր լինի որպէս օդն հարաւային։ մինչեւ մտանէ երրորդ մասն, որ խառնի յինքն ալիք ապայ, լինի իւր տանուտէրն օդն արեւմտից, որ է հով եւ չոր, այէխառն մարդոյն բնութիւն այս է, հով է եւ չոր։ Ապայ երբ մտանէ ի չորրորդ մասն, ի ծերութեան ժամանակն, լինի իւր տանուտէրն օդն հիւսիսոյ, որ է հով եւ գէջ, նոյնպէս ծերութեան ժամանակն լինի իւր տանուտէրն բնութիւնն հով է եւ գէջ։

«Եւ այն Դ. ջուրն զոր յիշեցաք յառաջն, աղին աչիցն է, զի եթէ չէր էութիւն աչացն աղի հալէր աչաց ճրագուն։

«Եւ լեղի ջուրն յականցն է, զի եթէ լեղին ականցն չէր, ճանճ եւ այլ սողունք մտանէր յականցն և որդնէր ականցն։

«Եւ քաղցր ջուրն ի բերանն է որ զուտելուն եւ զըմպելուն համն առնու եւ յիմանալ կարէ։

«Եւ հոտած ջուրն ի մէջքն է. վասն զի մարդն յիւրմէն ծնանի հրամանաւն Աստուծոյ փառք։

Յաղագս շինուածոյ էլեռոյն և ընդեղանն

«Ասէ իմաստունն գաղիանոս, թէ Աստուած արար զգլուխն մարդոյն, և հաստատեաց ի ներքս յինքեան զղեղն եւ զամենայն իմաստութիւն շարժողութեան յինքն ալըսպրեաց։

«Արար Աստուած զգլուխ մարդոյն Գ. մասն, զառաջինն արար ամսն խելաց, զերկրորդն արար ամսն յիշողութեան եւ զերրորդ մասն արար ամսն պահողութեան որ զամենայն ինչ տեսանէ և իմանայ եւ ինքն պահէ և ուսանի։

«Եւ օրինեաց Աստուած զղեղն, է աստառ, եւ է մաշկ. ամէն տապաղայի մաշկ մի վասն այն արար զամենն պահապան ըղեղան որ չուտ չիհասնի յինքն պատ ինչ։

«Առաջին տապաղան մաշկն է» Բ մորթն է, Գ միսն է, Դ ոսկրն է, Ե մորթ մի ալ կայ ի ներքոյ ոսկրին ի փակման. Զ. մաշկ մի այլ կայ ի վրայ ըղեղան, Է ըղեղն է։

«Վասն այն որ ետ զայս ամենքս ըղեղին պահապան որ հողմն կամ տաք չկարէ վնասել կամ մտանել յինքն, վասն զի ըղեղն հրամայող է և տանուտէրն սրտին, եւ սիրտն եւ ըղեղն այլ կենդանութիւն մարդոյն զի առողջութիւն է ներքս ի յըղեղն է։

«Եւ զմազն մարդոյն արար Աստուած եւ օրինեաց ի աւելի այրած արիւնէն եւ քանի աւելնայ մազն զալապայ լինի ըղեղն։

«Եւ այրած արիւնն շատնայ եւ այն աւելի այրած արիւնէն լինի որ այրի։

«Զի կենդանութիւն մարդոյն և առողջութիւն ի յստակ արենէն լինի։

«Եւ յորժամ միսն աւելնայ մազն չերեւնայ մարդոյն, մազն որ նոսր լինի պղղամտ լինի։

«Եւ մարդն որ ճաղատ լինի ի մէջ գըլխոյն ի խարտէշ մազէ լինի և մարդն զնորհքն և զամթն ի ղեղն ունի և երբ ղեղն դիպի ցաւ, այս երկու իրացս պակասութիւն լինի, և մարդն յիմար լինի և զգայ որ ղղէկն ու զգէշն չկարէ իմանալ։

«Եւ թէ ի մէջ ըղեանն որ է իշխանական, և խելապատակն թէ ցաւ հանդիպի կամ աւելուած ժողովի յիմացումն պակասի և աղաւաղ լինի և չկարէ ինչ իմանալ։

«Եւ թէ ի փորուածոյն հանդիպի ախտ ինչ որ է ունական տերէ ի վերայ նորա մոռացումն որ ոչ զգալոցն գիտէ և ոչ զգնալոցն ընդ ինքն։

«Ասացին բժշկապետքն թէ քանի մարդ տեսաք որ այս ցաւս յինքն երեւեցաւ որ զիրենց հօրն եւ մօրն անունն մոռացան որ զիրեանք էին ծնէր։

«Եւ կայ որ ընկիտայ եւ զբերանն մռանայ խփել որ անչափ մոռացկոտ լինի և այս ցաւս յալեւորութեան շատ հանդիպի քան այլ ժամանակ եւ ինքն ի պըլը զամէ լինի եւ ընծայի։

«Եւ այլ ճանապարհ մի կայ յղեղն ի սիրտն որ տեսանէ որ երբ այդ ճանբնիդ բռնվի ընծայի ի մարդն ցաւ մի որ կոչի սբայ եւ շատ հանդիպի որ երբ մարդն այս ցաւիս տէր լինի նայ, առանց խելաց առանց եւ խմացութեան լինի և գոյն երեսացն երթայ և զայդ անգէտ բժշկերն գիտեն թէ մեռած է և թաղել տան, եւ մարդն որ սբայ հանդիպի որպէս մեռած լինի և գոյն երեսացն երթայ, զի երբ այն ճանապարհն որ ղղեղն ի սիրտն է կալուն նայ, սիրտն այլ յղեղն չկարէ խմել և կենդանութիւն սրտին և տաքութիւնն յղեղն և այս ցաւերս երեւնայ, զի եթէ կենդանութիւն և լուսաւորութիւն և գոյակցութիւն ի սրտն չէր, շուտ պաղէր ըղեղն և մարդն մեռանէր, և թէ հովութիւն և գէճութիւն չէր շուտ այրէր ըղեղն։ Այլ արար Աստուած զղեղն հով եւ գէջ և իւր տանուտէրն զլուսինն եդեր։ Եւ զսիրտն արար Աստուած տաք և չոր և իւր տանուտէրն զարեգակն եդեր որ երկուքն յիւրեանց բնութենէն իրաց ուժ տան և բաժանին և իրաց գոյանան եւ բարով մնան կամ Աստուծոյ։

Վասն շինուածոյ աչացն

(Ընդօրինակուած ընդհանրաւոր)

Վերապատուելի Հայր,

Հոս կը վերջանայ ահա մեր կիսատ ընդօրինակութիւնը. ո՛տար թէ Սէնայ ափունքը պանդխտող հայ ուսանողութիւնը փափաքող լիներ յանկարծ, գնալ մերթ ընդ մերթ Փարիզու Աչքային հարիւրապարանը՝ տակաւ առ տակաւ ընդօրինակելու այն տասնէն աւելի հայ բժշկական ձեռագիրները՝ որք կը մնան անդ տարիներէ, դարերէ ի վեր, և որոնցմէ միայն Մխիթար Հերացւոյն Զերմանց հիւանդութեանց ընդօրինակեցաւ և տպեցաւ ցայսօր, Ջանիւք Վենետկոյ Մխիթարեան Հարց։

Բայց ո՛ւր տեղ որ, ո՛րու քով որ, կան և կը մնան հայ բժշկական ձեռագիրներ, երանի՛ թէ ա՛լ յարութիւն առնէին իրենց դարաւոր դերեզմանէն, լուսաւորելու համար հայ բժշկական պատմութիւնը՝ որ ա՛նչափ մութ է դեռ և անծանօթ և որոյ յայտնութիւնը կարող է շատ և շատ օգուտներ մատուցանել հայկական մատենագրութեանց։

Ձերդ անձնուէր
ՏՕՔՏՕՐ ՎԱՀՐԱՄ Ե. ԹՈՐԳՈՄԵԱՆ

* * *

ՊԱՏԱՍԽԱՆ

Առ Ազնուամեծար Տէր
Տօքտօր Վահրամ Ե. Թորգոմեան
ի Կոստանդնուպոլիս
Իւսկիւտար, Սէլամիէ

Ազնուամեծար Տէր,

Մեծ հաճութեամբ ընթերցայ Ձեր պատուական նամակն, որով պատուած էիք զիս։ Առանձինն շնորհակալութիւն մարդակազմութեան օրինակին համար զոր կը հաղորդէք։

Թէպէտ ծանօթ էր ինձ այդ գրութիւն, և ունէի ի ձեռին երկու օրինակ, բայց թող զայն՝ որ օրինակաց բազմանալովը շատ բան կը լուսաւորուի և կ'ուղղուի, — կայ ի ձերն հատած մի կարեւոր՝ որ միւս օրինակաց մէջ չի գտնուիր, միոյն մէջէն ինկած ըլլալով թուղթի մի, իսկ միւսը ճիշդ նոյն հատածէն եւեւ սկսելով։ Ձեր օրինակին այդ կարեւորութիւն տուող հատածին մէջ նշանակուած է անուն հեղինակի կամ խմբագրի, այն է՝ Ապուսայիդ։

Նոյն անունն անծանօթ չէ ի հայ գրականութեան։ Կայ ուրեք յիշատակեալ թէ Ս. Ներսէս Լամբրոնացի յօրինած է գրութիւն մի՝ «Անուանք Բաղաքաց-շինողաց ի խնդրոյ Աբուսայիդ բժշկի»։ (Տես Սիսուան, էջ 516, ի ծանօթ. և Պատմ. Հայ. Դպր. Ա. էջ 638։) Ասի՞ հնար է հետեւցնել թէ հայազգի է բժիշկ՝ թէեւ արաբական անուն կրէ, որ չէ ցանցառ ի նոյն ժամանակս։ Օրինակ ըլլայ ի մէջ այլոց բազմաց՝ որովք լի են ցիչատակարանք ձեռագրաց, միւս ոմն բժիշկ՝ որոյ անուամբ կայ ցայսօր արձանագիր յամէ ՉԻԲ=1273, և է այս. «Կամսուն Աստուծոյ ես Բլ Հասան հեքիմ, որդի Զաքարիա հեքիմին...» և ի վերջ կայս կը յիշատակուի նաեւ պատն՝ նոր-վին Հասան անուամբ (Տե՛ս Շիրակ, էջ 22, ի ծանօթ.։) Եթէ Ձեր հաղորդած ձեռագրին մէջ՝ լոկ Ապուսայիդ անունն գտնուէր, առանց յաւելուածոյ, կարող էինք հաստատել թէ այդ Ապուսայիդ՝ նոյն ըլլայ ընդ այնմ յորոյ ի խնդրոյ Ն. Լամբրոնացի գրած է վերոյիշատակեալ գիրքը։ Բայց առ երի յաւելեալ ազգի անուանք՝ ոչ միայն տարակուսական կ'ընեն, այլ նաև անլուծանելի առեղծուած կը դարձնեն այդ հեղինակին ազգայնութիւնն, կոչելով զինքն «Զանդիկ ոմն, Հռոմ ոմն»։ Հնար է թէ գրչի սխալ լինին այդոքիկ, բայց ո՞վ կարող է այսպիսի խարխուլ հիման վրայ կարծիք մի հաստատել։

Ի մի կողմն թողլով հեղինակին ազգայնութեան խնդիրն, և իրն բանասիրական հայեցմամբ նայելով, այն է՝ թէ արդեօք Մարդակազմութիւնս հայերէ՞ն շինուած է, եթէ թարգմանութիւն է յօտար լեզուէ, մեզի այնպէս կ'երեւայ թէ հաւանաբար թարգմանութիւն է։ Հայ Մատենագիրք իրենց ինքնագիր աշխատասիրութեանց՝ նա թէ եւ խմբագրութեանց անգամ սկիզբն, երբ իրենց անունն յայտնել կամենան, ուղղակի կը խօսին առ ընթերցողն, կամ գէթ բացայայտ կը ծանուցանեն թէ գրութիւնն իրենց յատուկ է։ Խօսքս բժշկայ վրայ ամփոփելով, բերեմ քանի մի օրինակ ի ծանօթից։ Զերմանց մխիթարութեան հեղինակն իւր գիրքը կ'սկսի ըսելով. «Ես Մխիթար Հերացի, ուրուսս ի բժշկաց... Կոչեալ ըստ իմոյ կարողութեանս առնել զգիրքս զայս...»։ Ամիրտովլաթ իւր ընդարձակ բժշկարանին Ցառաջաբանին ընկերները կը գրէ. «Այսպէս գիրն շինեցի ես Ամիրտովլաթ բժիշկն ամասիացին...»։ Դարձեալ իւր բժշկական բառարանին մէջ կը գրէ. «Թարգմանեցաւ այս գիրքս... ձեռամբ մեծաւոր անպիտան և անիմաստ բժշկին Ամիրտովլաթին ամասիացւոյ»։ Վերջապէս Ասար իւր բժշկարանին սկիզբն այսպէս կը խօսի. «Իսկ այժմ նուաստ ոգիս... անիմաստ և յոգնամեղ Ասար սեբաստացի կոչեցայ զընտիրսն հաւաքել... ի բանից իմաստասիրաց և բժշկական վարդապետացն»։

Դիտենք հանդէպ սոցա Մարդակազմութեան սկիզբներն հեղինակին վրայ գրուածն։... «Եղեն ճարտարք ազգս ազգաց, և ի սոցա հրամանէն և բանիցն քննեալ ստուգեցին... ընդ որս և մի ի նոցանէ՝ որ կոչի Ապուսայիդ Զանդիկ ոմն, Հռոմ ոմն, ի բազում գրոց ժողովեաց, զստակն զայս բանքս համառօտ ետ մեզ...»։—Այս խօսքն համեմատելով վերոյիշեալ հեղինակաց գրածին հետ, անդէն կը տեսնուի թէ օտար ոմն է և ոչ բուն հեղինակն կամ ի բազում գրոց ժողովողն, որ կը խօսի և այլոյ գրութիւնն կ'ընծայէ ընթերցողին, յայլ լեզու յօրինեալն՝ իւր ազգայնոց մատուցանելով իրենց յատուկ լեզուաւ։ Միով բանիւ՝ թեթեւ իսկ մտադրութիւն բաւական է իմանալու թէ այդ խօսքը գրողն՝ ո՞ոք և իցէ՝ միայն թարգմանած է Ապուսայիդի գործն։

Ցայսմ վիճակի իրաց դիւրին չէ որոշել ճշդիւ հայերէն մարդակազմութեանս գրութեան ժամանակն։ Եթէ գրութիւնն ինքնագիր աշխատասիրութիւն լինէր, կարող էինք գէթ հաւանաբար որոշել ժամանակն, վասն զի մեղի ծանօթ Ապուսայիդ բժիշկը ժամանակակից լինելով Ն. Լամբրոնացւոյ (Ֆ 1198), ի հարկէ իւր յօրինած գրութիւնն եւս՝ սակաւ մի յառաջ կամ յետոյ՝ ԺԲ. դարու երկրորդ կիսոյն գործ պէտք էր համարել։ Բայց ո՞վ կարող է այժմ ի հեռուստ իսկ դուշակել թէ ե՛րբ թարգմանուած է այն Զանդիկ-Հռոմ ոմն Ապուսայիդին գրութիւնն, անծանօթ լինելով թարգմանիչն։ Միայն ոճ և լեզու հայերէն գըրուածոյն կրնար նշոյլ մի տալ թարգմանութեան ժամանակին վրայ, բայց ոչ լիուլի ստուգութիւն։ Հետազօտութեանցս մէջ յաճախ խօսած ենք ընդօրինակողաց սովորութիւն վրայ, որ ըստ կամի կը փոխեն գաղափարած գրուածներն և իրենց ժամանակին ու տեղւոյն լեզուին կը յարմարցնեն, որով անհնարին կ'ըլլայ նախագաղափարին վիճակն կատարելապէս իմանալ։ Սակայն և այնպէս՝ սոյն տեսակէտն նկատելով գրութիւնս, հարկ է դնել որ հայերէն թարգմանութիւն Մարդակազմութեանս՝ կատարուած լինի ի մէջ ԺԳ. և ԺԴ. դարուց։

Այսպէս Փարիզու ձեռագրին վրայ նշանակուած երկու թուականաց և ոչ մին հնար է առնուլ իբրեւ ժամանակ թարգմանութեանս, ո՛չ ԺԶ. դար, որովհետեւ չունինք օրինակ այնպիսի ուսումնասիրաց կամ ուսմանխառն գրութեան յայնչափ հին ժամանակ, և ո՛չ ԺԷ. դար, որովհետեւ նոյն միջոցին շատ աւելի սորին ուսմանութեան հասած էր լեզուն։ Ուստի իբրեւ ամենայն նկատմամբ վերջական՝ մերժելով զառաջին թուականն, զերկրորդն, այն է ԺԷ. դար, կարող ենք ընդունել իբրեւ ժամանակ ընդօրինակութեան։

Աստ համառօտ տեղեկութիւն մ'ալ տամ մեր երկու օրինակաց վրայ։ Մին դրեթէ ամբողջ է, միայն փոքրագիր (քանի մի տողիւ) թուղթ մ'ինկած ըլլալով ձեռագրէն, յորում կը գտնուի Ձեր օրինակին «ընդ որս և մին ի նոցանէ» հատածն, իսկ «Ասէ իմաստունն Գաղիանոս թէ ստեղծեաց Աստուած զմարդն որպէս քաղաք մի» հատածէն սկսեալ՝ կարգաւ յառաջ կ'երթայ՝ յաղագս ստեղծման աչաց,—ականջաց,—քթին,—բերանոյն,—սրտին,—թոքին,—լերդին,—փայծաղան,—երիկամաց,—վաղիվիշտին,—լեղոյն,—բորբոյն,—ստամքին,—աղիոցդաց...։ Այնուհետեւ կ'անցնի այն գրաբառ մարդակազմութեան, որ գրուած է ի սկիզբն հին բժշկարանի (1294ին) մատենադարանի Ս. Ղազարու, որոյ վրայ խօսած ենք ի թիւ 5 Հանդիսիս (էջ 82)։ Այս ձեռագրին օրինակն ստացուած է Պր. Սերովբէի Ալիշան, ծանօթ ազգային հնագիտի ի մայրաքաղքիդ, որմէ օրինակեալ է մերն։—Իսկ երկրորդն կը գտնուի այն պակասաւոր բժշկարանին մէջ, որոյ վրայ տեղեկութիւն տուած ենք ի նոյն թիւ Հանդիսիս (էջ 83), որ եւ սկսելով Ձեր օրինակին «Արար Աստուած զերկինս և զերկիր» խօսքէն յառաջ կ'երթայ մինչեւ ի հատածն վասն ստեղծման ստամքին, որ կը մնայ թերի։—Այս երկու ձեռագիրք ընդհանրապէս իրարու նման են, և հաւասարապէս սխալագիր, սխալագիր առաւել քան զգիարիղենն, որ ինքնին ազատ չէ ի վրիպակաց։

Խնդրեմ ներել երկայնաբան թղթոյս, զոր կը փակեմ ուրախակից լինելով Ազնուամեծար Տեառնդ վասն ուսումնասէր ջանիցդ ի մասին հայ բժշկականութեան։ Միանգամայն կը համարձակիմ աղաչել, որ Ձեր պատուական ժամանակին մի մասն նուիրեք այդ ճիւղին, իբրեւ առանձինն առ Ձեզ ուղղեալ համարելով Հայկական բժշկականութեան հատածիս վերջին տողերն ի Հանդէս Ամսօրեայ, թ. 4, էջ 61 (*)

Ընդունեցէք մեծարանաց հաւաստիքն, որով կը մնամ

Ազնուամեծար Տեառնդ
խոնարհ ծառայ
Հ. ՂԵՒՈՆԴ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

(*) «Բայց նաև յայժմու վիճակիս՝ հայերէն բժշկարանք չեն անգուտ և անպիտան, ընդ հակառակն մեծ ծառայութիւն կրնան մատուցանել մանաւանդ գիտնոց՝ որ մասնաւորապէս զհետ են արաբական բժշկականութիւնն ուսումնասիրելու։ Այսպիսի մասնագէտք մեծ օժանդակութիւն կը գտնեն ի մեր բժշկարանս, որ լի և զեղեալ ըլլալով արաբական հռչակաւոր բժիշկներէ առեալ վկայութեամբք, բազմաք կարող են օգնել զանազան նկատմամբք իրենց լուսաւորութիւն տալու, տարակուսական խնդիրները լուծելու, արաբական սկզբնագիրներն կորուսեալ գըրոց վրայ տեղեկանալու։

«Միով բանիւ՝ մեր բժշկարանք եթէ ծանօթանան, այնպէս օգտակար կրնան ըլլալ ի մասին բժշկականութեան, ինչպէս եղած են այս դարուս մէջ մեր միջին և վերջին ժամանակաց պատմագիրք նկատմամբ պատմութեան միջին և վերջին դարուց։» (Հանդէս Ամսօրեայ)

Յ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

Խմբագրութիւն և թարգմանութիւն թուրքերէն, հայերէն, յունարէն, պուլկարերէն, եփրայեցերէն, եփրայական գիրով սպաներէն, ֆրանսերէն, անգլիերէն, ռուսերէն, գերմաներէն, իտալերէն եւ հոլանտերէն լեզուօք։ Գրասենեակը կը ստանձնէ եւս դասախօսութիւններ այս լեզուաց, դատական գործեր, հաշիւներու քննութիւն, կալուածոց, տրոց եւն. վերաբերեալ գործեր։ 519

Թիւ 4, Զիվէր Պէյ խան, Ղալաթիա, Թիւ 4

ՍԳՈՂԻ ՄՕՌԻՒ ԶԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Պ. Պոլիս, 25 սեպտեմբեր 1889

Պարոնայք Սգոդ և Պուն,

Յորմէ հետէ սկսած եմ գործածել Ձեր Սգոդի Օշարակը, միշտ լաւ արդիւնքներ ունենալով մանկանց խուլային և անարիւնութեան հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ։

Իմ կա՛մ ծիլքս է թէ այս հաստ լ և յաջող պատրաստութիւնը ժ շտ նախամեծար համառելու է Մօրու ձկան իւղին և կը յանձնարարեմ զայն։

ՏՐ. Ա. ԱՆՏՐԻԱՍԻՍ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակին

ԻԼԱՆ,

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԵՂ

Շիրքէթի Խայրիէ վաբոր իսկէլէլեր ի-չին ուզուն լուզու տէօրթ պուչուք մէթրատան օն իքի մէթրէա վէ գալընլըզը օն պէշ սանթիմէտն երիմպէշ սանթիմէ գատար օլմաք իւզրէ եէսի իւզ ատէտ գէտուսէ գաղբլըզը քէրէստէնին պիլ միւնագասա միւպահա օլունճաղը ճիհէթլէ պայիլէրինին բէրչէնպէհ վէ բազար իրթէսի կիւնլէրի սասաթ ետիսէ Շիրքէթի մէգբիւրէնին իտարէ մէճլիսինտէ պուլունմաղը իչուն իլանը քէֆիէտէ իպդիտար գլընը։ 455 1—3

ԻԼԱՆ

ՊԱՂՐ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Լաիրնէտէ քեայնի էմաքինը սաքէրիյէյէ իճրա օլունճաղ սույրն եօլլարընա ֆէրշ օլունմաղ իւզրէ միւպահասը իդթիզա իտէն օն պէն մէթրօ գատար մուխթէլիֆ դութրատա թիմուր պօրուլար միւնագասայա գօնուլտրընտան թալիպ օլանլարը չէրայիթի անլամաղ իւզրէ ինչաաթը ասքէրիյէ տաիրէսինէ միւրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր։

5 Թէմմուզ 1889 567
Նօ. 7 1—3

ԻԼԱՆ

ՊԱՂՐ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Տէպրէտէ պուլունան սասաքիրի շահանէէնին միւնագասայա գօնուլան պիր սէնէլիք էրզագրն ֆիյաթլարը իլէ մահալի թալիպլէրի էօհսէսինտէ օլսուզընտան թէնզիլաթ իճրասը իլէ պուլաճա թալիպ օլանլարը լէվազիմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

4 Թէմմուզ 1889 564
Նօ. 4 2—3

ԻԼԱՆ

ՊԱՂՐ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Հայվանաթը միրիյէ իչուն միւպայեա օլունճաղ եիւզ երիմի պէն ճէտիտա գանթար սամանը իչպու թէմուզը բուսինին օն իքինճի չարշէնպէհ կիւնի գարարը գաթիսի վիրիլէճէկինտէն վէ իրթէսի կիւնի եիւզտէ պէշ թէնզիլի գապալ օլունճաղընտան իթասընա թալիպ օլանլարը մագամը սէրասքերի լէվազիմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

4 Թէմմուզ 1889 565
Նօ. 5 2—3

ԻԼԱՆ

ՊԱՂՐ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Նիզամիյէ էլպիսէ անպարընա միւպայեա օլունճաղ մալիմ էլմէդտար կիւվէզ եիւն ավրոպա զայթանը իլէ սիյահ եիւն եու վարլաղ զայթան վէ սարրաճիսանէ անպարը իչուն իմալ իթարիրլէճէք իւզէնկիյէրին իթասընա թալիպ օլանլարը թարիխը իլանտան իթիպարէն պէշ կիւնէ գատար պէհէր կիւն մագամը Սէրասքերի լէվազիմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

4 Թէմմուզ 1889 566
Նօ. 6 2—3

ԻԼԱՆ

ՊԱՂՐ ՍԷՐԱՍԲԷՐԻ

Նիզամիյէ էլպիսէ վէ սարրաճիսանէ անպարլարը իչուն միւպայեասընա լիւզում կէօրինէն մատամիօլ վէ քէթէն պէպի իլէ միւթէնէվի թիմուր թօքա վէ զուհաֆ ֆէս վէ փիւսկիւլիւն ֆիյաթը մէվզուալարը իլէ թալիպլէրի էօհսէսինտէ օլուպ թէմմուզը օնրնճը կիւնինէ գատար պէհէր կիւն միւնագասալարը իճրա օլունարաղ գարարը գաթիլէրի վիրիլէճէկինտէն իթասընա թալիպ վէ օնպիրինճի կիւնի եիւզտէ պէշ թէնզիլինէ բաղիպ օլանլարը մագամը սէրասքերի լէվազիմաթ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

3 Թէմմուզ 1889 563
Նօ. 3 3—3

ԺԱՆ ԲՍԱԼԹԻ ‖ JEAN PSALTY

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1867ԻՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԱՐԱՍԵԱՑ

Վաճառատուն ի Բերա Գալաթիստան փողոց Թաղապետ. պաշտօնատան դիմաց

Գործարան ի Գուլէգաբու Թիւ 657
Մասնաճիւղ Աղաճամի Թիւ 127 և Գուլէգաբու Թիւ 659

Գիները խիստ աժան են

Ամէն տեսակ կարասիներ ննջարանի, սեղանատան, գրասենեկի և սրահներու ինչպէս նաև գրամատնոց և վաճառականաց գրասենեակներու համար։ Կարասեաց հաստատուն կերպիւ պատրաստութեան համար չոր փայտեր կը գործածուին։ Բնկուզենիէ, վարդի փայտ, մանէէ և այլ տեսակ փայտերէ կիսաւածներ կ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՕՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸ ԵՍ

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒՍ ՄԷՐՔԸՆԹԱՑԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐԻՈՅ 1,932,350

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐԻՈՅ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած ողջամտական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչև ցարդ տուժած վնասներն 15,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼԻՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շրջենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամատրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիօն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերապիչեալ երեք Ընկերութեանց

THE CROWN PERFUMERY COMPANY

ՀՈՏԱՒԷՏ ՆԻՒԹՈՅ ԴՈՐԾԱՐԱՆԸ ԼՈՆՏՈՆԻ «ԹԱԴ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Այս գոյացութիւնները շատ խիտ են, և անբաղդատելի են իբր բուրման առատութիւն և տեւականութիւն։ Աւելորդ անոնցմէ մէկ քանիին անունները.

ԹԷՆԿԻ ՎԱՐԴ (Թէնկի փայտ)	ՄԱԳՈՒԼԻԱ
ՎԱՐԴ ՎԻՈԼԷԹ (Մանուշակ անուշաբոյր)	ՀՈՌԻ ԳԼԸՊ
ԼԻԼԻ ՕՎ, ՏՅԻ ՎԱԼԼԷՅ (Շուշան հովտայ)	ԷՍ· ՊՈՒՌԷ
ՀՈՒԱՅԹ ՐՈՍ (Հեղմամ վարդ)	ՄԱԳՆՈԼԻԱ
ԳՐԷՊ ԷՅՆԻ ՊԼԱՍՍԸՄ	ԲԼԱՆՇ ԲԼԱՆՇ
ՀՈՒԱՅԹ ՀԷԼԻՈՏՐՈՊ	ՕՐՔՈՒՇՆԱԳՈ
ՍՊԱՅՏՍՈՒԹԻՒ	

Այս և այսպէս ուրիշ հոտաւետ նիւթեր մեծ հռչակ հանած են Եւրոպայի արքունեաց, ազնուականութեան և բարձր դասուն մէջ, իրենց հոտին փափկութեան և տեւականութեան համար։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՈԼՈՆԵՒ ՋՈՒՐ։ Ուրիշ ո և է գործարաններէ եկածն դէպքանց։ Մէկ փորձ միայն կը բաւէ։

ՕԹԱԼԻՆ ՓՈՇԻ ԳԻՆԻՊԷՒ ՀԱՄԲԱՐ։ Այս փոշին յաջողած է մինչև հիմա բոլոր գործածուածներուն անդ և ընդունուած է ազնուականութենէն և բարձր դասէն։ Դիմաց դոյնին փափկութիւն կուտայ, առանց հոտ թողու, մորթը կը պահպանէ ապրեւէն, հովէն, և վշտերէն կարգիլ։

Կիներէն զգաստանալու համար, պէտք է դիմել միայն Կ. Պոլսոյ միակ գործակալին ԷՍՄՈՒՆԴ Ս. ԱԲՈՒԱՆԱ
231 Անգլիական ընթերցարան Մէրքանոց Թիւ 95 և 97, Եիւքսակ Գալաթասրայ, Թրամուէյէն կայարանին մօտ, Վոյվոտայի պահականոցին կից։

1242

CAPSULES

MATHEY-CAYLUS

Préparées par le DOCTEUR CLIN Prix Montyon

Les Capsules Mathey-Caylus à *Enveloppe mince de Gluten* ne fatiguent jamais l'estomac et sont recommandées par les Professeurs des Facultés de Médecine et les Médecins des Hôpitaux de Paris, Londres et New-York, pour la guérison des :
Ecoulements anciens ou récents, la **Gonorrhée**, la **Blennorrhagie**, la **Cystite du Col**, le **Catarrhe** et les **Maladies de la Vessie**, et des *organes génito-urinaires.*

Une instruction détaillée accompagne chaque Flacon.

***Exiger les* Véritables Capsules Mathey-Caylus de CLIN & Cie, de PARIS,** *que l'on peut se procurer chez les Droguistes et Pharmaciens.*

ՀԱՋԻ, ՇՆՉԱՐԳԵԼԻՈՒԹԵԱՆ, ՊՈՒՆՇԻՐԻԹ, ՀՈՐԱՒՈՒԹԻՒ, ՅՐՏԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՑԵՆ ԿԵՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՆՉԱԳՈՂԻ ԵՒ ԽՈՒԱՀՈՂԻ ՀԻԱՆԳՈՒՈՒԹԵԱՆՑ դէմ իբր ապահով դարման այս դեղին վաղուցէն հռչակաւոր միջոց կը հաստատուի այն բազմութիւն նամանդիներով զորս Պ. Բօուէլ կ'ստանայ անոնցմէ որք գործածած և ճաշակած են նորա յատկութիւնները։

«Աֆրիկոյ թագուհւոյն Նէդիվի Թէոֆանօֆարոյին վրայ, ի Ռուիթ, Ակոմտա.

«Սիրելի պարոն. Ըստ օրուան կը նեղուիմ յանուն Տալէ մը որ գիշերը կ'զարթնուր ինձ քնանալ և ցերեկ-հանգիստ անցուներ, վասն. կոմս Քարթնէս յանձնարարիդ ինձ գործածել ձեր անգուգական քսայանէն ախիսնի հատիներով և կրնամ հաւատալ ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փոքր սրուանի բոլորովին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն պլոյդ։

(Սոր.) Վ. ԼԻՆԶԼԻ, Նէգրի թեղանոցի կրեն.

Կը վաճառուի ամէն դեղատանց և արտօնեալ դեղերու վաճառականաց քով, չիրը 1 շիլին 1½ բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պարտաւորեալ Հեռամբ ԹՈՄԱՍ ԲՕՈՒԷԼԻ, 4, Ալպիոն Բաղչայ, Պլաքֆրիարս բրա, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պոլսկիրոյ Ներկայացուցչին քով
76 Մ. ԷՍՄՈՒՆԴ ԳԱՐՈՒԱՆԱ
Անգլիական Ընթերցարան Մէրքանոց, Վոյվոտա, պահականոցին քով, կայարան Թրամուէյէն, 95 և 97

ՖՐԱՆՔՕ-ՀՕՆԿՐՈՒԱԶ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԻՊԻՍԱԲԷՍՔ

ՀԱՆԳԵՐՁ ՎԻՃԱԿԱՎԱՃԱՌՈՒԹԵԱՄԲ

Արտօնեալ դրամագլուխ	20,000,000
Գանձեալ »	10,000,000
Մահուան արկածէն դէմ պահեստի	12,000,000

Արեւելեան Տնօրէն · Մ. Էօժէն Բարարօր
» փոգոր գործակալ և քննիչ · Մ. Նաղարէթ Եաղրճեան

ԹՈՒՐՔԻՈՅ ԴԻԼԻՋԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալէօղեան և Պարքճեան Զմիւռնիա · Գասպարեան և Տամիսամիրեան Ամասիա · Գ. և Ս. Սեթեան Հալէպ · Բ. Շերէֆէֆտիին և Տէրունեան Ատալիա և Սպարթա · Սիմէոն Տէյիրմէնճի օղլու Քոնեա, Եւն Եւն։

Ֆրանքօ-Հունգարական կենաց անանուն ընկերութիւնը խիստ դիւրամատչելի պայմաններով մահուան դէմ ապահովութիւններ կընդունի, նոյնպէս փոքր տղայոց և աղջկանց ի չափահասութեան վճարելի պայմանաւ։

Ասելոյդ կը համարիմք ըսել թէ ամէն ընտանեաց և զուտակաց տէր անձանց իբր նուիրական պարտականութիւն մէջ տարեկան փոքրիկ զոհողութեամբ մը իւր կեանքն և իւր զուտակաց ապագան ապահովել. կամ ի ծերութեան օրերու և կամ յետ մահու իւր սիրելի կինն և զուտակունքը, տարաբաղդութեան սոսկալի ճիրաններէն հեռի պահելու համար։ Ասոնք արդէն հասարակութեան լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրեմք Ֆրանքօ-Հունգարական ընկերութեան չահաւէտ պայմաններուն և միմեանցմանութեան մասնաւոր տեսակներուն որ մէն մի տարի Պիտաբէսթի մէջ ի ներկայութեան կայսերական պաշտօնէից տեղի կունենան, մէն մի չահող թիւ 100 անգիական ոսկի չահելու պայմանաւ։

Ասելի ընդարձակ և կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել առ վարչութիւն։ Ոմն լեզուէ յայտարարութիւնք ձրի կը տրուին։

Գոհութեամբ կը ծանուցանեմք յարգոյ հասարակութեան թէ, ընկերութեանս 1885 յունվար 1էն մինչ 1886 տարւոյն յունվար 1ի ընդհանուր գործողութեանց հաշուեցուցակին, (Լոնդրոնեալ Առաջին-Հունգարական կառավարութիւն Ազգին. Ֆրոնց Նախարարութիւն) պահեստի դումարին վրայ 2 միլիոն ֆրանգի պահանջելի գումարի մը յաւելումի գոյացած է, որով անցեալ տարւոյն 10 միլիոն պահեստի գումարը ներկային 12 միլիոն է։ 286

EMULSION SCOTT

(ՍԿՕՏԻ ՕՀԼԵՐԵԿ)

ՄՈՐԻՒ ՁԿԵՆ ՀՕԼՍ ԻՒՂ

Իբրոֆոսֆիտ որ լաւ Ի սպիով

Պատրաստեալ Ձեռամբ ՍԿՕՏԻ և ՊՕՈՒՆԻ,
ի Նիւ-Եորք։

Կաթին չափ անսորժահամ է

Մորիւ ձկան հոլմ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, իբրոֆոսֆիտներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճաղատութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, պարզ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս · ՀԱՄԻԼՐ ԵՒ ՀԻՐՉԷԼ 443



ԳՈԼԻՄԷՆԻ ԳԻՆԻՆ հեշտահամ և կազդուրիչ ըմպելի մէ, բաղկացեալ Բարդոյի գինիէ, Լիպիգի մսի հիւթէ և Մալթի հիւթէ, կազմելով այսպէս անուշցնող, զօրաւոր և գրգռիչ խառնուրդ մը, որ թէ առողջ և թէ անկար մարդոց համար լաւ է հաւասարապէս։

Բժշկական համալսարանն հաւանած է նոա և բազմաթիւ նշանաւոր բժիշկներէ յանձնարարեալ է. ՀԱՅԱՐԷ ԱՒԵԼԻ ԲԺԻՇԿ զրած են իրենց վկայութիւններն։ Աստ կը թարգմանենք վկայութիւնն տոքթոր

Թ. ՐԷՃԻՆԱԼԴ ՃՈՆԷՍԻ, Մ. Բ. Մ. Ս. Լ. Լ. Մ. Գ. Ս. Բ. Ճ.ԵԻ ԸՆԿ.

26, Լորն Բոա և 24 Հավիլգրն Սգուէէր
Պրբընտիտ, 2 սեպտեմբեր 1888

Պարոնայք — Ի նկատ առնլով խարդախ մրցման մը հանած զանազան լուրերը, կը փափաքիմ յայտնապէս գրուցել ձեզ թէ որչափ գոհ եմ ձեր Մաթ և Մալթի պատրաստութիւնէն. Քանի քանի անգամներ տեսած եմ սաստ առողջարար ազդեցութիւնն այն հիւանդութիւնից վրայ որոց համար պատուիրած եմ դայն, և ինչ ինչ պարագայից մէջ ձեռք բերած եմ հրաշալի արդիւնքներ զորս պարզ դիտեն (առանց մուգի) չպիտի կրնար տալ։

Ընդ հանրութիւն, և այլն և այլն

Թ · ՐԷՃԻՆԱԼԴ ՃՈՆԷՍ

Ի վերոյ, մայրաքաղաքիս գլխաւոր բժիշկ ներքսապէս յանձնարարած են զայն։

Հարցնել Գոլիմէնի Գինին Լիպիգի մսի և Մալթի խառնուրդով դեղաշնչալ կեղծարարներն։ Պիտի ճանաչուի ստորագրութիւն, միակ գործակալ ի Թուրքիա Դոյիսան և ընկերութեան գործարան

Ս · Ճոյս Նորուիչ և Լոնտոն։

ԷՍՄՈՒՆԴ ԳԱՐՈՒԱՆԱ

ԸՆԴ · ԱՆՈՒՐ ՄԻԵՒԱՆՈՅ ԱՆԳԼԻԱԿԱՆ, պահականոցին քով, կայարան Գալաթիա-Շէշլիի Թրամուէյից· Թիւ 95 և 97, Գալաթիա 80

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԼԻ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՑԱԿ

1889 Յունիս 4 Կիւրակի օրէն սկսեալ մինչև յետոյ տնօրինութիւն

(Նոյն կիրակի օրերէն) Եւրոպական եղանակ
կամուրջ ելնող շրջենաւոց երթեւեկութիւն։
ժ. ..

11 — Լենիմ· Մէզարպ · Պէյիւք · Թարպ · Լենիք Պոյճ. Ի · Հիսար (Ամենավերջին շրջենաւին հետ պիտի Տաղորդակցի) 19
11 45 Ի Ա. Գավազ Լենիմ · Մէզպ · Պեզաք · Թարպ · Լենիք · Պէյսմրդ · Ի · Հիսար (Ամենավ շրջ · հետ պիտի Տաղորդակցի) 32
12 15 Պէյ · Թարպ · Պէյդօզ մինչև Գանտիլի (Կանտիլ շրջ · հետ պիտի Տաղորդակցի. Ուրբաթ օրերը մինչև Լեսկիւսար) 17
12 45 Լենիմ· Մէզպ. Պեզ թարպ · Պէյդօզ Բաշպ · Լենիք · Պեմն Մերկ · Ի · Հիսար Պեպէք (Պեպէքի շրջ · հետ պիտի Տաղորդակցի բայց ուրբաթ) 21
1 — Լենիմ· Մէզարպ · Թէպիրլ · Թարպ · Լենիք (Ասոնցմէ եկող շրջ · ին հետ պիտի Տաղորդակցի. Ուրբաթ օրերը Սեմէն. Մերկէն Ի · Հիսար Պեպէք եկա 18
2 — Ի · Ա · Գավազ Մէզար · Պէյիւք · Թարպ · Պէյդօզ և Ասիական եղեռքը գանգուած մինչև Գուպկ · բոլոր նաւամատոյցները և Գաղ. (Ուրբաթ օրերը 1 45ին Մէզարպուրունէն պիտի եկէ 28
2 45 Լենիմ· Լենգ. Պեզ. Թարպ · Լենիք · Սեմէն · Մերկ · Պոյաճ · Ի · Հիսար · Պեպէք (Ասիական շրջենաւին հետ պիտի Տաղորդակցի. Ուրբաթ օրերը Ասիական · Գուբ · Օրթ · Պէյշք · պիտի հանդիպի) 34
4 15 Լենիմ· Մէզպ. Պէյիւք · Թարպ · Լենիք · Սեմէն Մերկ · Պոյաճ · Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք 18
5 45 Լենիմ· Մէզպ · Պեզ · Թարպ · Լենիք · Սեմէն · Մերկ · Պոյաճ · Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք 21
7 — Լենիմ· Մեզարպ · Պեզիրք · Թարպ · Պեյդօզ Բաշպ · Լենիք · Մերկ · Գանդճ · Ի · Ա. Հիսար Գանտիլ · Ասիական · Զենկ · Պեյլեր · Օրթաք · Գուբ · Պեշիք · Իւսկ · 25
8 15 Ի · Գավազ Լենիմ· Մեզարգու · Պեզ · Թարպ · Լենիք · Մերկ · Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք · 17
19 — Մեզարդ · Պեզ · Թարպ · Լենիք · Մերկ · Ի · Հիսար Ասիական · Օրթաք · Պեշ · 33

Ասիական-Գանգրէնի կամուրջ ելնող շրջենաւ

11 — Պեպէք Ասիական · Գուբրուչ · Օրթ · Պեշիք · 33
11 5 Լենիք · Սեմէն. Պոյաճ · Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբրուչ · Օրթ · Պեշիք · 22
11 30 Պեպէք Սեմէն · Գուբ · Օրթ · Պեշիք · 22
11 50 Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք · 6
12 30 Ասիական · Գուբրուչ · Օրթ · Պեշիք · 25
12 50 Ի · Հիսար Պեպէք Ասիական · Գուբրուչ Օրթ · Պեշիքթաշ 33
1 30 Ասիական · Գուբրուչ · Օրթ · Պեշիք · 23
2 10 Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք · Գաղ · 22
3 — Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք · 6
3 45 Պեպէք Ասիական · Գուբրուչ · Օրթաք · Պեշիք · Գաղ · (Ուրբաթ օրերը Գաղ. չի հանդիպիր) 23
4 30 Պեպէք Ասիական · Գուբ · Օրթ · Պեշիք · 33
10 50 Հիսարէն ուղղակի կամուրջ 6
11 20 Պեպէքէն ուղղակի կամուրջ (բացի ուրբ) 25

Ասիական եղեռքէն կամուրջ ելնող շրջենաւ

11 — Վ. ամիք · Զենկ · Պեյլ · Գուզ · Պեշիք 28
11 20 Պէյդօզ Բաշպ · Զուպուգ · Գանդ · Ա · Հիսար Գանտ. (Գանտ. պիտի հանդիպի.) 23
11 55 Պեպէք Գանտ. Վ. ամիք · Զենկ · Պեյլ · Գուզկ · Պեշիքթաշ 34
12 35 Պէյդօզ Բաշպ · Զուպուգ · Գանդճ. Ա · Հիսար Գանտ. [Գանտ. պիտի հանդիպի. Ուրբաթ օրերը Վ. ամ. Զենկ. Պեյլ · Գուզկ · Իւսկիւտար 17
1 15 Գանտ · Վ. ամիք · Զենկէլ · Պեյլէր · Գուզ · Իւսկ · (Բացի ուրբաթէ) 19
2 10 Գանտ · Վ. ամիք · Զենկէլ · Պեյլէրպ · Գուզկ · (Բացի ուրբաթէ) 32
2 45 Պեյդ · Բաշպ · Զուպուգ · Գանդճ · Ա · Հիսար Գանտիլ · Վ. ամիք · Զենկ · Պեյլ · Գուզկ · Գաղ · (Ուրբաթ օրերը 1 45ին Մէզարպուրունէն) 28
4 — Գանտ · Վ. ամ. Զենկ · Պեյլ · Գուզկ · Իւսկ · 17
4 15 Պեյդ · Բաշպ · Զուպ · Գանդ · Ա · Հիսար Գանտ · Վ. ամիք · Զենկ · Պեյլ · Գուզ · Պեշիք · (Ուրբաթ օրերը ժամ 4 Մէզ. էն եկնելով Պեյսիք · Թարպափու եւս) 19
6 45 Մերկ · Ի · Ա. Հիսար Գանտ · Ասիական · Զենկ · Պեյլ · Օրթ · Գուզկ · Պեշիք · Իւսկ · 6
9 15 Պեյսիք · Թարպ · Պեյդօզ Բաշպ · Զուպ · Գանդճա Ա · Հիսար Գանտիլ · Վ. ամիք · Զենկէլ · Պեյլէրպէյ · Գուզկ · Իւսկ · 28
9 30 Գանտիլիէ ուղղակի կամուրջ (Բացի ուրբաթէ) 22
10 20 Գանտիլի Զենկէլքեայ 23
11 — Գուզկուանճուքէն ուղղակի կամուրջ (Բացի ուրբաթէ) 22

(Բացի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական եղեռքէ երեքեւեկող շրջենաւոց ժամերը

12 — Պէյիք · Օրթ · Գուրչ · Ասիական Ի · Հիսար Մերկ · Եենիք · Թարպա · Պէյդ · Պէշ · Ա. և Ա · Գավազ (Ուրբաթ օրերը Մէզարպ · Պէյդօզ եւս) 28
1 — Պէյիք · Օրթ · Գուշ · Ասիական Ի · Հիսար Պոյճ · Եենիք · Թարպ · Պեզ · Մէզպ · Եենիմ · 34
2 — Գաղաթ · Իւսկ · Պեշիք · Գուզկ · Սրթ · Պեյլեր · Զենկէլ · Ասիական · Գանտիլ · Ա. և Ի · Հիսար Գանտրճ · Մերկ · Եենիք · Բաշպ · Պեյդ · Թարպ · Պեզ · Մէզ · Եենիմենճալլէ 25
2 30 Պեշիք · Օրթ · Գուր · Ասիական · Պեպէք Ի · Հիսար Մերկ · Եենիք · Թարպ · Պեյդ · Մէզպ · Եենիմանճալլէ 18
3 15 Պեշիք · Գուզկ Օրթ · Պեյլեր · Զենկէլ · Ասիական · Պեպէք 33
4 — Պեշիք · Օրթ · Սրթ · Պեպէք Ի · Հիսար Պոյճ · Եենիք · Թարպ · Պեյդ · Մէզար · Եենիմ · 21
5 — Իւսկ · Պեշիք · Գուզկ · Օրթաք · Պեյլ · Զենկ · Ասիական · Գանտ · Ա. և Ի · Հիսար Գանտ · Մերկ · 6
6 — Գաղաթ · Պեշիք · Օրթաք · Գուրուչ · Ասիական · Պեպէք · Ի · Հիսար Մերկ · Եենիք · Պեյդ · Թարպ · Պեզ · Մէզար · Եենիմ · և Գաղաթներ 17
7 — Պեշիք · Իւսկ · Գուզկ · Պեյլ · Զենկ · Ասիական · Գանտ · Ա. և Ի · Հիսար Մերկ · Եենիք · Պեյդօզ Թարպ · Պեյլիք · 28
8 30 Պեշիք · Օրթ · Ասիական · Պեպ · Ի · Հիսար Մերկ · Եենիք · Թարպ · Մէզար · Պեզ · 3
9 15 Պեշիք · Օրթ · Գուրչ · Ասիական Գանտիլ · Ա · Հիսար Գանդրճա Զուպգ · Բաշպաշ · Պեյդ · Թարպ · Պեյլիք · Մէզարպ · Եենիմ · Ուրբաթ օրերը մինչև Մէզարպ · 21
10 — Եենիք · Թարպ · Պեյդիք · Մէզարպ · Եենիմ · [Բացի ուրբաթէ] 18
10 30 Ի · Հիսար Պոյաճ · Մերկ · Սեմէն